unicef
յուրաքանչյուր
երեխայի համար

# ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԱԳԻՐ

## Միջանձնային հաղորդակցություն և համայնքների ներգրավում՝ ներառական կրթությանն աջակցելու նպատակով

Վերապատրաստման մոդուլի
մասնակիցների ուղեցույց

Երևան 2024

**Կազմի լուսանկարը՝** © UNICEF Armenia/2023/Margaryan

Սարգիս, 6 տ., օգտվում է Լոռու մարզի Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի հատուկ գույքադարանի փափուկ և փայտե գույքից: Գույքադարանը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ 2023 թ-ի մայիսին՝ աջակցելու հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ֆիզիկական, զգայական թերապիայի, պալիատիվ խնամքի իրականացմանը հատուկ գույքի միջոցով:

## ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

«Ուսուցչի Օրագիրը» մշակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի և Հայաստանի Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի փորձագետների կողմից՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի կողմից մշակված «Ընկալման փոփոխություն. ուսուցիչների իրավունքների և հնարավորությունների ընդլայնում» մանկավարժների վերապատրաստման ձեռնարկի հիման վրա:

Շնորհակալություն ենք հայտնում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի փորձագետներ Հայկուհի Ադամյանին, Հասմիկ Օհանյանին, Անի Գարեգինյանին և Լիանա Մարգարյանին, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչներ Հասմիկ Առաքելյանին և Մարիամ Ալիխանովային՝ այս օրագրի մշակման և կազմման գործում ունեցած նշանակալի ներդրման համար:

Օրագրում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին, և պարտադիր չէ, որ արտացոլեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի քաղաքականությունը և տեսակետները:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ……4
ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՕՐԱԳԻՐԸ……4
ՕՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՊԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԵՐԻ ՀԵՏ……4
ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏՎԵԼ «ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԱԳՐԻՑ»……6
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ……8

**ԴԱՍ 1.** ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……9

Օժանդակ նյութ 1.1……10
«Ես» հասկացություն……11
Վարժություն 1.2. Նախապաշարմունքներ, կարծրատիպեր, խտրականություն և ճնշում……13
Վարժություն 1.3. Չգիտակցված կանխակալություն……17
Վարժություն 1.4. Երբ տարբերությունները ճյուղավորվում են. նախապաշարմունքների և խտրականության ազդեցությունը……20

**ԴԱՍ 2.** ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐԱՑԻՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ……24

Վարժություն 2.1. Ուսուցիչների համոզմունքներին հակադրվելը……25
Աշակերտների բազմազանությունը……28
Վարժություն 2.3. Արդարացիության բացը լրացնելը……34
Վարժություն 2.4. «Կենդանի բազմազանություն». գնահատել և հարգել աշակերտների փորձը……36
Օժանդակ նյութ 2.5. Մշակութային իրազեկության վերաբերյալ ստուգաթերթ……38

**ԴԱՍ 3.** ՇՓՈՒՄԸ ԱՅԼՈՑ ՀԵՏ. ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ……43

Վարժություն 3.1. Հաղորդակցման լեզուն……44
Օժանդակ նյութ 3.2. Լեզվի արտահայտման գործողություններ……46
Վարժություն 3.2. Ակտիվ լսում հաղորդակցության մեջ……48
Օժանդակ նյութ 3.4. Ակտիվ լսման մասնակցի արձագանքը……49
Վարժություն 3.3. Ուսուցիչ-աշակերտ հարաբերություններ. դուրս գալով ուսուցիչ-աշակերտ պաշտոնական դերերից……52
Դրական հաղորդակցություն աշակերտի և ուսուցչի միջև……53
Վարժություն 3.4. Համախմբում. լուծումների վրա հիմնված համագործակցություն……55

**ԴԱՍ 4.** ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ.....59

Վարժություն 4.1. Գերիշխող ազդեցության և ինստիտուցիոնալ իշխանության դինամիկա .....60
Վարժություն 4.2. Իշխանության դինամիկա. փոփոխությունների իրականացում.....62
Վարժություն 4.3. Փոփոխությունների սխեմայի կիրառում.....63
Վարժություն 4.4. Համագործակցել որպես գործող մասնագետների համայնքներ. ուսուցիչները որպես փոփոխության գործակալներ.....66

**ԴԱՍ 5.** ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԿԵՐՊԱՐԸ .....68

Վարժություն 5.2. Տնօրենի գործողությունները խնդրահարույց իրավիճակներում.....69
Վարժություն 5.3. «Ներառող տնօրեն» գաղափարի ամփոփում.....71

**ԴԱՍ 6.** ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԲԱԶՄԱԶԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ ԿՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ.....73

Վարժություն 6.1. Անձնական աճի մտածելակերպ ունեցող ուսուցիչ.....74
Վարժություն 6.2. Նոր աշակերտներ դասարանում. գնահատել և հարգել աշակերտների փորձը.....76
Վարժություն 6.3. Մշակութային իրազեկությունը գործողության մեջ. աշակերտների բարձրաձայնած կարծիքներն ու մտահոգությունները.....80
Վարժություն 6.4. Ծնողների և ընտանիքների հետ համագործակցություն և փոխգործակցություն.....82
Վարժություն 5.2. Տեսանյութի դիտման ուղեցույց.....86

**ԴԱՍ 7.** ԴԵՊԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ԻՐԱԶԵԿ ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ.....88

Վարժություն 7.1. Համայնքի ներգրավում. լիազորությունների բաշխում արդարացի արդյունքների հասնելու համար .....89

ՀԱՎԵԼՎԱԾ.....93

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՀՆԱՐՆԵՐ.....93

1. Տասը տարի անց.....93
2. Վարդ, փուշ, բողբոջ.....93
3. Եռօրյա ճամփորդության կոր.....94

ՆՇՈՒՄՆԵՐ.....95

## ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսուցիչ, այս օրագիրը կլինի Ձեր օգնականն ու ուղեկիցը ինչպես ողջ դասընթացի, այնպես էլ Ձեր հետագա մանկավարժական գործունեության ընթացքում: Այստեղ Դուք կարող եք գրառել դասընթացի ընթացքում ձևավորված մտքերը, հետաքրքիր, զարմանալի կամ անհանգստացնող փաստերն ու գաղափարները, որոնք հնարավորություն կընձեռեն հետագայում Ձեր աշխատանքները պլանավորելու, վերանայելու և վերարժևորելու գործընթացում: Օրագրում կարող եք նշել կարևոր կետեր, օգտագործել բանալի բառեր, դիագրամներ կամ գծապատկերներ:

Օրագրում կգտնեք նաև մոդուլի մեջ կիրառվող կարևոր գաղափարները, սահիկները կամ գծապատկերները:

## ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՕՐԱԳԻՐԸ

Ուսուցչի օրագրի ստեղծման գաղափարը ծնվել է «Ընկալման փոփոխություն. ուսուցիչների իրավունքների և հնարավորությունների ընդլայնում» մոդուլային դասընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Այն կուղղորդի մասնակիցներին վերապատրաստման ողջ ընթացքում՝ հնարավորություն տալով նրանց կատարել թիրախային նշումներ, արձանագրել անհատական և խմբային աշխատանքների արդյունքները, կարևոր գաղափարները, ինչպես նաև՝ տեղում ուսումնասիրելու մոդուլային դասընթացի ձեռնարկում ներառված օժանդակ նյութերը, տեսանյութերը և այլն:

## ՕՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՊԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԵՐԻ ՀԵՏ

Օրագիրը իրենից ներկայացնում է դասընթացի բաղադրիչների գործնական աշխատանքները՝ ըստ հետևյալ բաժինների.

**ԴԱՍ 1.** «Ինքնություն, տարբերություն և ներառականություն»,

**ԴԱՍ 2.** «Ներառականության հիմնական հասկացությունները. հավասարություն, արդարացիություն, արդարություն»,

**ԴԱՍ 3.** «Շփումը այլոց հետ. միջանձնային հաղորդակցություն»,

**ԴԱՍ 4.** «Դպրոցներ և ինստիտուցիոնալ իշխանություն»,

**ԴԱՍ 5.** «Դպրոցի տնօրենի կերպարը»,

**ԴԱՍ 6.** «Դասարանում բազմազան մշակույթ կրող անձանց հետ աշխատանքը»,

**ԴԱՍ 7.** «Դեպի մշակութային առումով իրազեկ դպրոցներ և ներառական համայնքներ»:

**Դաս 1**-ը նպատակ ունի ուսումնասիրել մեր ինքնագնահատականը, սոցիալական ինքնությունը և նախապաշարմունքները, ինչպես նաև այլոց կարծրատիպային ընկալումը և խտրականությունը, որը բխում է այդ վերաբերմունքին համապատասխան գործելու արդյունքում:

**Դաս 2**-ում անդրադարձ է կատարվում ուսուցիչների՝ իրենց դասարանում առկա բազմազանության հետ կապված համոզմունքներին և մտահոգություններին: Սա հնարավորություն է տալիս ուսուցիչներին, ինչպես նաև այլ մանկավարժների՝ տարբեր տեսանկյուններից դիտարկել սոցիալական արդարության և արդարացիության խնդիրները և պարզել, թե ինչպես են դրանք տարբերվում հավասարությունից:

**Դաս 3**-ը նպատակ ունի ի մի բերել 2-րդ դասում ներկայացված մշակութային իրազեկության տարրերը, որոնք միտված են տարբերությունների պայմաններում արդյունավետ աշխատելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:

**Դաս 4**-ի նպատակն է ներկայացնել դպրոցը՝ որպես ազդեցության վայր, հաստատություն և մշակութային տարածք ուսուցիչների, աշակերտների, ծնողների և ավելի լայն համայնքի համար, որին այն ծառայում է:

**Դաս 5**-ը նպատակ ունի  վեր հանել և կարևորել դպրոցի տնօրենի՝ որպես շարժիչ ուժի, դերը հանրակրթական ուսումնական հաստատությունում «իրական ներառում» ապահովելու գործընթացում:

**Դաս 6**-ի նպատակն է  քննարկել և վեր հանել դասարանում բազմազանության և մշակութային իրազեկության հարցերը: Ուսուցիչներին առաջարկվում է մանրակրկիտ ուսումնասիրել, թե ինչ են նրանք սովորեցնում և ինչպես են սովորեցնում: Դասն առաջարկում է ռազմավարություններ, որոնք ուսուցիչները կարող են կիրառել՝ տարբեր ծագում ունեցող երեխաներին հնարավորություն տալով մասնակցելու, հաջողությունների հասնելու և դասարանում առաջադիմություն ունենալու:

**Դաս 7**-ը նպատակ ունի  ընդլայնել և ամրապնդել այն գաղափարը, որ դպրոցների և համայնքների միջև հարաբերությունները փոխկապակցված են: Համայնքները ստեղծում են դպրոցներ, իսկ դպրոցները՝ համայնքներ: Ուսուցիչներն ու դպրոցները համայնքի (իրականում մի քանի համայնքի) մաս են կազմում, որին նրանք ծառայում են, որի հետ կարող են կապ հաստատել և ձեռք բերել ռեսուրսներ (ժամանակ, ֆինանսավորում, փորձ, հմտություններ, կապեր)՝ համատեղ սոցիալական միջոցառումների համար:

# ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏՎԵԼ «ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԱԳՐԻՑ»

Վերապատրաստման մոդուլը հիմնված է մասնակցային մեթոդի վրա և ընդգրկում է տեսություն, խմբային քննարկումներ, մտագրոհներ, գործնական առաջադրանքներ, դերախաղեր և այլն: Մոդուլի յուրաքանչյուր բաժին պարունակում է տեղեկություններ և նյութեր, ինչպես նաև վարժությունների վերաբերյալ ցուցումներ, և հիմնական գաղափարներ: Ուսուցչի օրացույցը կրկնում է վերապատրաստման մոդուլի կառուցվածքը:

Ստորև ներկայացնում ենք պատկերանշաններ, որոնք օգտագործվում են Օրագրի ընթացքում և հուշում, թե ինչի վերաբերյալ է բաժինը:

## Հիմնական գաղափարներ

Օրագրի որոշ բաժիններ պարունակում են կարևոր շեշտադրումներ, որոնք ներկայացնում են վերապատրաստման մոդուլի համապատասխան բաժինների կարևոր մտքերը, բուն թեմաները:

## Խմբային աշխատանք

Այս պատկերանշանը նախատեսված է գործնական առաջադրանքները՝ հարցուպատասխանը, մտագրոհը, խմբային քննարկումներն ու աշխատանքները մատնանշելու համար: Գործնական առաջադրանքները համարակալված են և ընդգրկում են վարժության նպատակի մասին համառոտ նկարագիր, անցկացման համար նախատեսված ժամանակի ցուցում և անհրաժեշտ նյութեր:

## Անհատական աշխատանք

Այս պատկերանշանը մատնանշում է անհատական աշխատանքները:

## WOW էֆեկտ

Այս պատկերանշանը մատնանշում է, որ Օրագրի այդ հատվածում կհանդիպեք նոր փաստի, անակնկալ գաղափարի, որը կարող է փոխել Ձեր մասնագիտական կամ անձնական կյանքը:

## SIT տեխնիկա

Երբ տեսնեք այս պատկերանշանը, նշեք մեկ զարմանալի (Surprising), մեկ հետաքրքիր (Interesting) և մեկ անհանգստացնող (Troubling) փաստ կամ գաղափար առաջարկվող նյութի վերաբերյալ:

## Ակտիվ հղումներ

Դասընթացի որոշ թեմաների կամ գործնական առաջադրանքների ուսումնասիրման նպատակով կամ ուսումնառության գործընթացն ավելի դինամիկ դարձնելու համար Օրագրում առաջարկվում են հղումներ առցանց ռեսուրսներին: QR ծածկագրով առաջարկված տեսանյութերը կամ նյութերը կարող են կիրառվել դասընթացավարի կողմից ինչպես դասերի ընթացքում, այնպես էլ առաջարկվել մասնակիցներին որպես այլընտրանքային օժանդակ ռեսուրս՝ հետագայում նյութին անդրադարձ կատարելու համար: Նյութերին ծանոթանալու համար բացեք Ձեր հեռախոսի տեսակցիկը, ապա պահեք QR ծածկագրի վրա: Երբ տեսախցիկը իդենտիֆիկացնի ծածկագիրը, Ձեր էկրանին կտեսնեք հղումը: Սեղմեք հղման վրա, որպեսզի այն բացվի և նյութը հասանելի դառնա:

## Վերլուծական ինքնանդրադարձ (ռեֆլեքսիա)

Այս պատկերանշանը մատնանշում է սովորածը պարզելու հնարները, որոնք նախատեսված են իմանալու, թե որքանով են յուրացվել լսարանում ստացած գիտելիքները, ինչ գիտելիքներ բարելավելու կարիք կա՝ ուսումնասիրության մնացած մասը կենտրոնացնելով հենց դրանց վրա:

## Նշումներ

Այս պատկերանշանն առաջարկում է գրի առնել այն բացահայտումները, որոնք կարևորել եք և կցանկանաք հետագայում կիրառել:

## Հարցեր

Այս պատկերանշանը նախատեսված է դասընթացի ժամանակ ծագած հարցերը գրի առնելու համար: Սա կօգնի ավելի խորացնել գիտելիքները դասերի վերաբերյալ:

## Քննարկումներ

Այս պատկերանշանը մատնանշում է դասընթացի այն բովանդակությունը, որն անհրաժեշտ է քննարկել զույգերով կամ խմբի հետ:

## Վարժություն «Ես եմ»

Անհատական աշխատանք

- Աչքերի փոխարեն նկարեք այն, ինչ սիրում եք տեսնել:
- Ականջների փոխարեն նկարեք այն, ինչ սիրում եք լսել:
- Քթի փոխարեն նկարեք այն, ինչից սիրում եք հոտ քաշել:
- Բերանի փոխարեն գրեք բառեր, որոնք հաճախ եք օգտագործում:
- Մազերի փոխարեն նկարեք տարվա այն եղանակը, որը նախընտրում եք:
- Սրտի փոխարեն նկարեք սիրելի իր, անձ, կամ երևույթ:



# ԴԱՍ 1. ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Նշումներ**

Դասընթացի ընթացքում գրանցեք հնարավորինս շատ կարևոր գաղափարներ (օգտագործեք կետեր, հիմնական բառեր և գաղափարներ, դիագրամներ կամ գծապատկերներ):

**Հարցեր**

Գրի առեք Ձեզ մոտ ծագած հարցերը: Սա կօգնի Ձեզ ավելի խորացնել գիտելիքները:

**WOW էֆեկտ**

Գրի առեք այն բացահայտումները, որոնք կցանկանաք հետագայում կիրառել:

# ԴԱՍ 1. ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 1.1

Անհատական աշխատանք

## Հարցաթերթ «Ո՞վ եմ ես»

Ստորև ներկայացված են քսան համարակալված դատարկ տողեր: Խնդրում ենք տալ քսան տարբեր պատասխաններ «Ո՞վ եմ ես» պարզ հարցին: Պատասխանեք այնպես, կարծես պատասխանում եք ինքներդ ձեզ, ոչ թե մեկ ուրիշին: Պատասխանները գրեք այն հերթականությամբ, որ հերթականությամբ դրանք գալիս են ձեր մտքին:

Մի անհանգստացեք տրամաբանության կամ «կարևորության» համար: Վարժությունը պետք է կատարել բավականին արագ, քանի որ դրա համար ունեք ընդամենը 12 րոպե:

1.
2.
3.
4.
5.
6.
7.
8.
9.
10.
11.
12.
13.
14.
15.
16.
17.
18.
19.
20.

Մի անհանգստացեք, եթե չհասցնեք 12 րոպեի ընթացքում պատասխանել բոլոր 20 հարցերին:

## «Ես» հասկացություն

**Ինքնանդրադարձ (ռեֆլեքսիա)**

Ո՞ր գործոններն են ձևավորում Ձեր ինքնությունը:

Ձեր ինքնության ո՞ր մասն եք ընտրում ինքներդ:

Ձեր ինքնության ո՞ր մասն է, ըստ Ձեզ, պայմանավորված ուրիշներով, հասարակությամբ կամ պատահականությամբ:

Ո՞ւմ կարծիքն ու համոզմունքներն են ամենամեծ ազդեցությունն ունեցել Ձեր իսկ ինքնության մասին Ձեր կարծիքի վրա:

Ձեր ինքնության ո՞ր կողմերն եք գաղտնի պահում, որպեսզի ընդունված լինեք տարբեր միջավայրերում: Ձեր ինքնության ո՞ր կողմերն եք պատրաստ փոխելու, որպեսզի համապատասխանեք շրջապատի պահանջներին:




**Նկար 1.** Բազմազանության անիվը



**Հիմնական գաղափարներ**

- Ինքնաճանաչումն ձեռք բերելը օգնում է մեզ հաշվի առնել մեր արժեքներն ու համոզմունքները, մտածել, թե ինչ ենք անում, ինչպես ենք վերաբերվում ուրիշներին և ինչպես ենք վարվում:
- Ինքնավերլուծության պրակտիկան օգնում է մեզ պատկերացում կազմել այն մասին, թե ինչով են պայմանավորված ինչպես մեր հաջողությունները, այնպես էլ անհաջողությունները, և որտեղ ենք մենք գտնում աճի նոր ոլորտներ մեր աշխատանքը մեր արժեքներին համապատասխանեցնելու համար:
- Մեր սոցիալական ինքնությունը ձևավորվում է բազմաթիվ գործոններով, մենք փնտրում ենք խմբեր, որոնց հետ նմանություններ ենք տեսնում:
- Մենք փնտրում ենք խմբեր, որոնց անդամները մեզ նման են (համոզմունքներով, գաղափարներով, դավանանքով, ազգությամբ, առանձնահատկություններով և այլն), ընդունում ենք այդ խմբի առանձնահատկությունը (խմբի ներսում) և համապատասխանում նրա նորմերին, քանի որ դա մեզ տալիս է անձնային արժեքի, հպարտության և ընդունված լինելու զգացում:
- Մենք կարևորում և իմաստավորում ենք տարբերությունները և բացառում կամ մարգինալացնում ու հեռացնում ենք այն խմբերը, որոնք «մեր» խմբի մաս չեն կազմում:

# ԴԱՍ 1. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.2. ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐ, ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՆՇՈՒՄ

Այս վարժության նպատակն է մտագրոհների, քննարկումների միջոցով դուրս բերել մեր մտորումները «Նախապաշարմունք», «Կարծրատիպ», «Խտրականություն» և «Ճնշում» հասկացությունների շուրջ, ինչը կօգնի Ձեզ, որպես ուսուցիչ, ճանաչել և վերացնել Ձեր դասարանում առկա վնասակար համոզմունքները:

Խմբային աշխատանք

**Նախապաշարմունք** - մարդկանց նկատմամբ ունեցած բացասական կամ դրական զգացմունքներ՝ ելնելով որոշակի սոցիալական խմբի նրանց պատկանելությունից: Այն գիտակցված կամ չգիտակցված վերաբերմունք է մարդկանց մի ամբողջ խմբի և դրա առանձին անդամների նկատմամբ: Այն ներառում է խմբի անդամների գնահատականները, ինչպես նաև հույզերը, որոնք առաջանում են այդ խմբի անդամների մասին մտածելիս կամ նրանց հետ շփվելիս: Որպես կանոն, բացասական վերաբերմունքն ունի գենդերային, էթնիկական, կրոնական, սոցիալ-տնտեսական և մշակութային ուղղվածություն: (Օրինակ՝ «Դուք չեք կարող վստահել գնչուներին/հրեաներին/սևամորթներին»: Նախապաշարմունքը կարող է արտահայտվել հակակրանքի, զայրույթի, վախի, զզվանքի, տհաճության և նույնիսկ ատելության տեսքով: Երբ նախապաշարմունք ունեցող անձն ունի իշխանություն (հեղինակություն) և այն օգտագործում է որոշակի խմբի պատկանելության պատճառով անձին հնարավորություններից, ռեսուրսներից կամ դրանցից օգտվելու հնարավորությունից զրկելու նպատակով, ապա նա խտրականություն է կիրառում:

**Կարծրատիպերը** պատկերացումներ են մարդկանց մի ամբողջ խմբի մասին՝ առանց հաշվի առնելու նրանց անհատական տարբերությունները: Դրանք նկարագրում են տարբեր խմբերի անդամների առանձնահատկությունները, բնորոշ գծերն ու վարքագիծը: Կարծրատիպերը վիրավորական ընդհանրացումներ են (առանց որևէ փաստական հիմքի կամ առանց խմբի անդամներին ճանաչելու), որոնք պարզեցնում են մեր հասարակության մեջ բազմազանությունը նկարագրելու և պատկերացնելու եղանակը: Օրինակ՝ «բոլոր գնչուները/հրեաները/սևամորթները ծույլ են»: Ողջ հասարակության մեջ ձևավորվել են կարծրատիպեր և նախապաշարմունքներ ոչ սպիտակամորթ մարդկանց, կանանց, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, ԼԳԲՏ համայնքի, ՁԻԱՀ-ով հիվանդների և այլոց վերաբերյալ: Բացասական կարծրատիպերը սովորաբար ասոցացվում են անապահով փոքրամասնությունների հետ: Այդուհանդերձ, բացասական կարծրատիպերը հաճախ կարող են լինել նաև գովասանական (օրինակ՝ նրանք պարզապես ամեն ինչ վերցնում են երկրից և

ոչինչ չունեն տալու, բացի, թերևս, իրենց երաժշտությունից): Սակայն, նույնիսկ դրական կարծրատիպերը կարող են ունենալ բացասական ազդեցություն պարզապես այն պատճառով, որ դրանք լայն ընդհանրացումներ են: Օրինակ՝ չինացիները լավ են մաթեմատիկայից:

**Խտրականություն** կարող է առաջանալ միջանձնային հարաբերություններում, սակայն այն կարող է դրսևորվել նաև ինստիտուցիոնալ և մշակութային մակարդակներում: **Ուղղակի խտրականություն** առաջանում է այն ժամանակ, երբ անձին թույլ չի տրվում օգտվել իրավունքներից, կամ նրան վերաբերվում են այլ կերպ, քան ուրիշներին՝ ելնելով մարդկանց որևէ խմբի կամ կատեգորիայի նրանց պատկանելությունից: **Անուղղակի խտրականություն** դրսևորվում է այն դեպքում, երբ որևէ չափանիշ, միջոց կամ ընթացակարգ սահմանվում է ակնհայտորեն չեզոք ձևով, բայց իրականում հանգեցնում է անհատների և խմբերի միջև անհավասարության: Օրինակ՝ ըստ ամենայնի տեղին կլինի ռուս երեխաների ուսուցումը սկզբնական շրջանում կազմակերպել առանձին դասարաններում ՝ օգնելու նրանց հաղթահարել լեզվական արգելքները, երբ ուսուցման լեզուն նրանց մայրենի լեզուն չէ: Այդուհանդերձ, եթե դրանից տուժում են միայն ռուս երեխաները և արժանանում պակաս բարենպաստ վերաբերմունքի, քան մյուս երեխաները, ովքեր ստիպված չեն հաճախել առանձին դասերի, ապա դա անուղղակի խտրականություն է:

**Կառուցվածքային խտրականությունը** պայմանավորված է հասարակության մեջ ընդհանուր ռեսուրսների անհավասարաչափ բաշխվածությամբ, ինչպես նաև այն փաստով, որ հասարակության կառույցները նպաստում են նման անհավասարությունների պահպանմանը: Կարծրատիպերը և նախապաշարմունքները ազդում են վարքագծի վրա, ինչն էլ իր հերթին ազդում է կարծրատիպերի և նախապաշարմունքների վրա:

**Ճնշումը** հասարակական հեղինակություն ունեցող մարդկանց մի խմբի կողմից մարդկանց մեկ այլ խմբի համակարգված հպատակեցումն է, որի արդյունքում խմբերից մեկը մյուսի նկատմամբ առավելություն է ստանում, որը պահպանվում է հասարակական համոզմունքներով և գործելակերպով: Օրինակ՝ աղջիկները, ովքեր կարծում են, որ չեն կարող ուժեղ լինել մաթեմատիկայից կամ բնագիտությունից (տղաները պարզապես ավելի լավ են), կամ աղքատ ուսանողները, ովքեր կարծում են, որ չեն համապատասխանում խորացված դասընթացներին մասնակցության պահանջներին: **Ներքին ճնշվածությունը** հատուկ չէ խմբին և կարող է ազդել տարբեր ժողովրդագրական խմբերի պատկանող աշակերտների վրա (դաս, սեռ, ռասա, էթնիկ ծագում, տարիք և այլն):

Նախապաշարմունքների, կարծրատիպերի և խտրականության միջև կապի օրինակներ անցյալում և ներկայում.

- Հարավային Աֆրիկայում ապարտեիդը (ռասայական զատում) առաջացել է սևամորթ մարդկանց նկատմամբ նախապաշարմունքից, իբր նրանք ցածր են սպիտակամորթ մարդկանցից (զուտ մաշկի գույնից ելնելով) և, հետևաբար, չունեն քվեարկելու իրավունք, պետք

է ապրեն առանձին համայնքներով և չեն կարող օգտվել միևնույն հասարակական օբյեկտներից (սանհանգույցներ, ռեստորաններ և այլն), ինչ սպիտակամորթները:

- Բուլինգը, որը դրսևորվում է այն երեխաների նկատմամբ, ովքեր այլ կերպ են հագնվում, չեն կրում վերջին շքեղ կոշիկները, հագուստը կամ պարզապես այն պատճառով, որ նրանք այլ տեսք ունեն («թույն» տեսք չունեն):
- Իսլամաֆոբիան, հակասեմիտիզմն ու հոմոֆոբիան նախապաշարմունքների, կարծրատիպերի և խտրականության ժամանակակից դրսևորումներ են:

**Նախապաշարմունքները, կարծրատիպերն ու խտրականությունը** կարող են փոխանցվել նուրբ ուղերձներով և մեթոդներով: Օրինակ՝ ֆիլմերի միջոցով, որտեղ տղամարդիկ ներկայացվում են որպես հերոսներ, իսկ կանայք՝ որպես նրանց օգնականներ կամ ավելի թույլ էակներ: Մանկական գրքերի միջոցով, որտեղ այլ մշակույթները ներկայացվում են բացասական երանգներով (ասիացիները՝ որպես «շեղաչք», ինչպես նշվում է Դր. Սյուսի «Եթե ես կառավարեի կենդանաբանական այգին» գրքում): Այդուհանդերձ, այս օրինակների վրա ուշադրություն կարելի է հրավիրել ուսուցողական նպատակներով:

Ներառական կրթություն իրականացնող մանկավարժների համար կարևոր է հաշվի առնել վերը նշվածն ամբողջությամբ՝ միաժամանակ մտածելով փոքր երեխաների մասին: Նրանք հաճախ ընդօրինակում են մեծահասակների տեսակետներն ու գաղափարները և կարող են խտրականություն դրսևորել («Դու չես կարող խաղալ մեզ հետ, որովհետև չես կարող խոսել մեզ պես») և ներքին ճնշվածություն («Ես չեմ կարող խաղալ այս խաղալիքներով, քանի որ ես այստեղից չեմ»): Դժվար չէ գնահատել նման փորձառությունների ազդեցությունը երեխաների երկու խմբերի վրա:



Ակտիվ հղումներ

**Լրացուցիչ տեղեկատվություն. «Նախապաշարմունքներ, կարծրատիպեր, խտրականություն և ճնշում»**



**Հիմնական գաղափարներ**

- Կարծրատիպերն ու նախապաշարմունքները սկսվում են սոցիալական դասակարգումից. գործընթաց, որի միջոցով մարդկանց բաժանում ենք սոցիալական խմբերի և բնութագրում ողջ խմբին:
- Արտաքին խմբերի վերաբերյալ ենթադրություններն ու դատողությունները հիմնված են ոչ թե փաստերի, ապացույցների կամ բանական մտածողության վրա, այլ՝ թե ինչ են մեզ ասում, և ինչին ենք սկսում հավատալ:
- Այս ենթադրությունների հիման վրա գործելը կարող է հանգեցնել խտրականության և անարդար վերաբերմունքի այլոց, ներառյալ մեր աշակերտների և ծնողների նկատմամբ:
- Մեր սեփական համոզմունքների, վերաբերմունքի և վարքագծի մասին մտածելը և դրանք վիճարկելը երաշխավորում են սխալ ենթադրությունների, անարդար վերաբերմունքի կամ իրավունքների ոտնահարման կանխումը հատկապես մեր մասնագիտական, աշխատանքային միջավայրում մարգինալացված խմբերի հետ հաղորդակցվելիս:
- Աշակերտների, հատկապես երեխաների անհատականության վրա կարող են մեծ ազդեցություն ունենալ նրանց շրջապատող մեծահասակները և հանգեցնել իրենց մասին դրական կամ բացասական պատկերացում կամ կարծրատիպ ստեղծելուն:
- Որպես ուսուցիչ՝ մենք պետք է ճանաչենք և վերացնենք մեր դասարանում ներքին ճնշվածությունը հենց ՎՄՁ (նախադպրոցական կրթության) մակարդակում:

**Նշումներ**

# ԴԱՍ 1. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.3. ՉԳԻՏԱԿՑՎԱԾ ԿԱՆԽԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Այս վարժության նպատակն է տեսանյութի շուրջ քննարկումների, մտորումների միջոցով կարողանալ տեսնել մեր «չգիտակցված կանխակալությունը» և դրա ազդեցությունը մեր համոզմունքների և որոշումների վրա, այդ թվում՝ աշակերտների ուսման վերաբերյալ որոշումների վրա:

## Կանխակալության կառավարում

Խմբային աշխատանք

### Սցենար 1.

Մանկավարժների չգիտակցված կանխակալության և դրա արդյունքում փոքրամասնությունների խմբի պատկանող աշակերտների ցածր առաջադիմության, նրանց չափից շատ նախատելու վերաբերյալ քննարկման ընթացքում դպրոցի աշխատակիցը պոռթկում է. «Ես ռասիստ չեմ: Ես բոլորին նույն կերպ եմ վերաբերվում: Ինձ համար միևնույն է՝ աշակերտներս սև են, սպիտակ, մանուշակագույն, թե կանաչ, նրանք բոլորն էլ հավասար հնարավորություններ ունեն իմ դասարանում»:

- Արդյո՞ք բոլոր աշակերտներին «նույն կերպ» վերաբերվելը նշանակում է «արդար լինել»:
- Ինչու՞ են փոքրամասնությունների խմբի աշակերտներին շատ նախատում: Ինչու՞ է նրանց առաջադիմությունը ցածր:
- Վերլուծեք դեպքի սցենարը և քննարկեք պնդումները, կանխակալ կարծիքները: Առաջարկեք իրավիճակին արձագանքելու եղանակներ:

### Սցենար 2.

Ուսուցիչը ներկայացնում է երրորդ դասարանի ծրագրի առաջիկա բաժինը ընտանիքի մասին, որտեղ քննարկվելու են տարբեր տիպի ընտանիքներ, այդ թվում՝ որդեգրող ծնողները, տարբեր ռասաների պատկանող ծնողները, խնամատար ծնողները, տատիկներն ու պապիկները՝ որպես հիմնական ծնողներ, նույն սեռի ծնողներ և այլն: Ծնողներից մեկը լուրջ մտահոգություն է հայտնում. «Երեխաներն այնքան անմեղ են, նրանք չեն նկատում այդ տարբերությունները: Ի՞նչ կարիք կա նրանց հաղորդել մտքեր, որոնց նրանք պատրաստ չեն, և ավելի վատթարացնել իրավիճակը»:

### Սցենար 3.

Դիտարկեք ուսուցիչներից մեկի ասածը. «Իմ կարծիքով՝ դա ճիշտ է, հատկապես այն անձանց դեպքում, ովքեր «ամենախելացիներից» չեն: Նրանք կյանքի հմտությունների կարիք ունեն: Նրանք պետք է հմտություններ ձեռք բերեն, որպեսզի կարողանան օգնել մյուսներին այն ոլորտներում, որտեղ նրանք գուցե այնքան էլ լավ արդյունք ցույց չեն տալիս»:

Ո՞ւմ նկատի ունի նա որպես «ոչ ամենախելացիներ»: Արդյո՞ք մասնակիցներն այդպես են մտածում իրենց դպրոցի աշակերտների որոշ խմբերի մասին՝ նրանց հետ դասարանում/դպրոցում խնդիրներ ունենալու պատճառով: Արդյո՞ք նրանց մոտ տարբեր սպասելիքներ են ձևավորվում մի երեխայից, ով լավ չի խոսում տվյալ լեզվով՝ ի տարբերություն մեկ ուրիշի, ով լավ է տիրապետում լեզվին: Թե՞ հաշմանդամություն ունեցող երեխա է:

### Սցենար 4.

ՎՄԶ մակարդակը ներառելու նպատակով դպրոցն ընդլայնվում է: Երեխաների մեծամասնությունը կոնկրետ էթնիկական խմբից է և չի խոսում այդ երկրի մեծամասնության լեզվով: ՎՄԶ ուսուցիչներն ասում են. «Նրանց հետ պետք է խոսենք միայն ուսուցման լեզվով: Նրանք ստիպված են արագ սովորել և մեզ հետ չխոսել իրենց մայրենի լեզվով, քանի որ այդ դեպքում մենք նրանց չենք հասկանա»:

### Մտորումների և կանխակալության կառավարման որոշ գործիքներ

Միացրած լապտերը պահեք ձեզ վրա և ուսումնասիրեք նեղության ու անհարմարության զգացումները.

- Ի՞նչն է այս զգացումների պատճառ դառնում:
- Ինչու՞ եմ այդպես զգում:
- Արդյո՞ք ես այդպես կվարվեի, եթե դա մեկ ուրիշը լիներ...:
- Ի՞նչ ԳԻՏԵՄ (գիտելիք, իրազեկություն):
- Որո՞նք են իմ արժեքները (հարգանք, արդարություն, փոխհարաբերություններ): Որո՞նք են հարգանքի, հավասարության, արդարության վերաբերյալ իմ տեսակետները, և արդյո՞ք այդ զգացումները համապատասխանում են դրանց:
- Որքանո՞վ է վարքս համապատասխանում իմ արժեքներին:



**Հիմնական գաղափարներ**

- Չգիտակցված կանխակալությունը վերաբերմունք է կամ կարծրատիպ, որն ազդում է մեր հասկացողության, որոշումների և գործողությունների վրա՝ առանց մեր գիտակցության:
- Աշակերտների որոշակի խմբերի նկատմամբ չգիտակցված կանխակալությունն ազդում է նրա վրա, թե ինչպես են ուսուցիչները որոշումներ կայացնում կարգապահության, աշակերտների՝ ուսման մեջ ձեռքբերումների մասին, դատողություններ անում աշակերտի ունակությունների վերաբերյալ և, հետևաբար, ազդում աշակերտների՝ սեփական արժանիքների մասին համոզմունքների վրա:
- Չգիտակցված կանխակալությունը ճանաչելը և այն չվերացնելը հանգեցնում է մեկուսացման և խտրականության:
- Կանխակալության զտիչների մշակումը և մեր սեփական ենթադրությունների վիճարկումը կարևոր նշանակություն ունեն կրթության ոլորտում պարտականություններ կրողի մեր դերում:
- Մենք պետք է տեղյակ լինենք մանկահասակ երեխաների չգիտակցված կանխակալության մասին և օգնենք նրանց հաղթահարել այն, քանի որ դա կարևոր է սեփական անձի մասին պատկերացում կազմելու և զարգանալու ունակության համար:



**Ակտիվ հղումներ**

**Լրացուցիչ տեղեկատվություն.**
**«Չգիտակցված կանխակալություն»**

# ԴԱՍ 1. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.4. ԵՐԲ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՃՅՈՒՂԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ. ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Այս վարժությունն ամրապնդում է այն հիմնական գաղափարը, որ նախապաշարմունքներն ու խտրականությունը հիմնված չեն փաստական տեղեկատվության վրա, որը մենք ունենք անձի կամ մարդկանց խմբի վերաբերյալ: «Պառակտված դասարան» տեսանյութի շուրջ քննարկման միջոցով մենք կընդգծենք անհատականության, խմբի անդամակցության, արտոնությունների, նախապաշարմունքների և խտրականության միջև կապը:

## Կանխակալության կառավարում

Խմբային աշխատանք

### Սցենար 1.

«Պառակտված դասարան» տեսանյութի դիտման ուղեցույցի ցուցումները. Ֆիլմի դիտման ընթացքում կատարեք գրառումներ, որոնք կօգնեն ձեզ պատասխանել հետևյալ հարցերին:

### Ուշադրությունը կենտրոնացրեք ուսուցչի վրա.

1. Ի՞նչ բացատրություններ է տալիս ուսուցչուհի տիկին Էլիոթը՝ խմբի գերազանցության և ստորադասության մասին իր պնդումները հիմնավորելու համար:
2. Ի՞նչ մեթոդիկա է կիրառում տիկին Էլիոթը՝ գերադաս խմբին համոզելու, որ նրանք գերադաս են, իսկ ստորադաս խմբին՝ որ նրանք ստորադաս են:
3. Ի՞նչ արտոնություններ է տալիս տիկին Էլիոթը վերադաս խմբին և ի՞նչ արտոնություններից է զրկում ստորադաս խմբին:

### Ուշադրությունը կենտրոնացրեք աշակերտների վրա.

1. Ինչպե՞ս են վերադաս խմբի աշակերտներն իրենց դրսևորում այն բանից հետո, երբ տիկին Էլիոթը բացատրում է, որ իրենք ավելի լավն են իրենց աչքերի գույնի պատճառով:
2. Ինչպե՞ս են ստորադաս խմբի աշակերտներն իրենց դրսևորում այն բանից հետո, երբ տիկին Էլիոթը բացատրում է, որ իրենք պակաս ընդունակ են և պակաս կարևոր՝ իրենց աչքերի գույնի պատճառով:
3. Ինչու՞ են առանձին աշակերտները և խմբերը համաձայնում կամ չեն համաձայնում այդ որոշումներին:

4. Ինչպե՞ս են խմբերին վերագրված դրական և բացասական պիտակները ազդում նրանց ուսման առաջադիմության վրա:

Աղբյուր՝ «Facing History and Ourselves» («Առերեսվելով պատմությանը և ինքներս մեզ») կայք www.facinghistory.org

## ՎՄԶ-ի համար

1. Մասնավորապես, ի՞նչ եք կարծում, մանկահասակ երեխաների վրա ինչպիսի՞ն կլինի ռասիզմի կամ կարծրատիպերի ազդեցությունը մեծամասնության և փոքրամասնությունների մշակույթների համապատկերում:

2. Շատ փոքր տարիքում երեխաները տարբերություններ չեն տեսնում, բայց բազմաթիվ ազդեցությունները, որոնք նրանք կրում են մեծանալուն զուգընթաց, ձևավորում են շրջապատող աշխարհի մասին նրանց ընկալումները: Ի՞նչ է նշանակում այս ամենը այն համատեքստում, թե ինչպես ենք մենք կրթում նրանց և օգնում ձևավորել սեփական անհատականությունը:

3. Մտածեք հատկապես նրանց սոցիալականացման մասին: Որտե՞ղ են մանկահասակ երեխաները սովորում, որ որոշ մշակույթներ / ռասաներ / կրոնական խմբեր ավելի լավն են կամ ոչ այնքան ընդունելի, քան իրենցը: Ո՞վ է նրանց սովորեցնում դա, և ի՞նչ հետևանքներ է ունենում այն մեզ՝ մանկահասակ երեխաների համար պատասխանատու ուսուցիչներիս համար:



Ակտիվ հղումներ

**Տեսանյութ «Պառակտված դասարան»**

Նշեք մեկ **զարմանալի** (Surprising) փաստ կամ գաղափար

Նշեք մեկ **հետաքրքիր** (Interesting) փաստ կամ գաղափար

Մեկ **անհանգստացնող** (Troubling) փաստ կամ գաղափար

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե ով է որոշում՝ որ տարբերություններն են էական: Ինչպե՞ս են մեր հասարակության մեջ տարբերությունների վերաբերյալ համոզմունքները ձևավորում մեր հայացքները մեր և ուրիշների նկատմամբ: Ինչպե՞ս է այն ձևավորում մեր արձագանքը նրանց, ովքեր տարբերվում են մեզանից: Ի՞նչ կարող են անել արտոնյալ դիրք զբաղեցնողները համակարգային խտրականությունը նվազեցնելու համար:



**Հիմնական գաղափարներ**

- Երբ հասարակության անդամների կողմից մեր անհատականության որոշակի տարրեր մյուսների անհատականությունից վեր են դասվում, ապա դա կարող է ազդել նրա վրա, թե ինչպես ենք մենք տեսնում ինքներս մեզ, ինչպես ենք տեսնում ուրիշներին և նրանց հետ մեր փոխշփումները:
- Զգացմունքներն ու վարքագիծը հաճախ պայմանավորված են խմբային մտածողությամբ, որը ղեկավարվում է հեղինակավոր գործիչների կամ մարդկանց կողմից, ում մենք հարգում ենք հասարակության մեջ:
- Եթե խտրականությունը «նորմավորված» է, դառնում է համակարգային և շարունակաբար խորացնում անարդարությունը թաքնված ձևերով:
- Կանխակալության և խտրականության ազդեցությունն ունի հեռուն գնացող սոցիալական հետևանքներ և ազդում է նրա վրա, թե ինչպես ենք մենք՝ ուսուցիչներս, տեսնում մեր աշակերտներին, իսկ աշակերտներն, իրենց հերթին, տեսնում իրենց:

**Նշումներ**

## ԴԱՍ 2. ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐԱՑԻՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Դասընթացի ընթացքում գրանցեք հնարավորինս շատ կարևոր գաղափարներ (օգտագործեք կետեր, հիմնական բառեր և գաղափարներ, դիագրամներ կամ գծապատկերներ):

Գրի առեք Ձեզ մոտ ծագած հարցերը: Սա կօգնի Ձեզ ավելի խորացնել գիտելիքները:

Գրի առեք այն բացահայտումները, որոնք կցանկանաք հետագայում կիրառել:

# ԴԱՍ 2. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.1. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱԿԱԴՐՎԵԼԸ

Այս վարժության նպատակն է դերախաղի և խմբային քննարկումների միջոցով բացահայտել դասարանում տարբեր խմբերի ներառման վերաբերյալ մեր ունեցած որոշ համոզմունքներն ու սխալ պատկերացումները:

## Ռադիոբանավեճ



Խմբային աշխատանք

Դերախաղում ընդգրկվելիս հաշվի առեք Ձեր ստանձնած դերը, դրանում նշված համոզմունքները և կերպարի առանձնահատկությունները:

Եթե Դուք ռադիոունկնդիր եք, ապա կարող եք ներկայացնել Ձեր կարծիքը՝ բարձրացնելով ձեռքը, որպեսզի համակարգողը հնարավորություն տա Ձեզ արտահայտվելու:

| | Կարծիքներ | Ձեր դերը |
|---|---|---|
| 1. | Հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է սովորեն հատուկ դպրոցներում, որտեղ կան մասնագետներ, ովքեր կարող են օգնել նրանց: | Դուք թոշակառու ուսուցիչ եք: |
| **2.** | Մեր երեխաները հետ կմնան, եթե ուսուցիչն իր ուշադրությունը կենտրոնացնի այս մարգինալացված երեխաների վրա: | Դուք հարուստ ծնող եք: Ձեր հարևանը հաշմանդամություն ունեցող երեխա ունի: |
| **3.** | Երեխաները, ովքեր լավ չեն տիրապետում ուսուցման լեզվին, կիջեցնեն ամբողջ դասարանի առաջադիմությունը: | Դուք ծնող եք, ով ակտիվ է դպրոցում և միջոցներ է նվիրաբերում միջոցառումների համար: |
| **4.** | Ուսուցիչները պետք է առանձին դասավանդեն մեծամասնությունից տարբերվող էթնիկական խմբերի երեխաներին, նույնիսկ եթե նրանք նույն դպրոցում են սովորում: | Դուք նախկին տնօրեն եք: |
| **5.** | Եթե աշակերտը չի կարողանում ինքնուրույն կատարել առաջադրանքը, նա խելացի չէ: | Դուք ուսուցիչ եք: |

| | | |
|---|---|---|
| **6.** | «Հավասարը հավասարին» սկզբունքով ուսուցումը լավ է վատ սովորող երեխաների համար, բայց լավ չէ նրանց հետ աշխատող մյուս երեխաների համար: | Դուք ծնող եք: |
| **7.** | Ուսուցիչները չեն կարող դասարանում ունենալ աշակերտներ, ովքեր խանգարում են դասը. նրանք չեն վերապատրաստվել նման երեխաների հետ աշխատելու համար, և այս երեխաները չեն կարող լինեն դասարանում: | Դուք համայնքի նախկին ոստիկան եք: |
| **8.** | Աշակերտները, ովքեր հաճախ ձախողում են քննությունները, չպետք է մասնակցեն սովորական դասերին: | Դուք հոգեբան եք: |
| **9.** | Միայնակ ծնողները ժամանակ չունեն մասնակցելու դպրոցական միջոցառումներին: | Դուք քաղաքային բնակավայրի դպրոցներից մեկի տնօրենն եք: |
| **10.** | Անկիրթ ծնողներ ունեցող երեխաները լավ չեն սովորի դպրոցում: | Դուք ինքնուրույն հարստացած գործարար եք: |
| **11.** | Բոլոր աշակերտները կարող են սովորել: Պետք է հասկանանք, թե ինչպես դասավանդենք, որպեսզի բոլորը սովորեն: | Դուք փորձառու ուսուցիչ եք: |
| **13.** | Փոքրամասնությունների համայնքի երեխաների ծնողները կարծում են, որ ավելի լավ է իրենց երեխաներին խնամել տանը, քան նրանք հաճախեն ՎՄՁ հաստատություններ: Մենք պետք է հարգենք նրանց ցանկությունները: | Դուք փոքրամասնությունների համայնքի ծնող եք և հաճախ խտրականության եք ենթարկվում, այստեղից՝ ձեր կարծիքը ՎՄՁ-ի մասին: |

Մյուս ունկնդիրները կարող են պարզապես ներկայացնել իրենց տեսակետները հաղորդման ընթացքում: Հետևյալ մի քանի դերերը կարող են հանձնարարվել լսարանին: Ըստ ձեր դերի՝ դուք կարող եք որոշել, թե ինչ կարծիք կարող եք ունենալ այն հարցի վերաբերյալ, որը ցանկանում եք արտահայտել հաղորդման ընթացքում:

### Լրացուցիչ դերեր ռադիոունկնդիրների համար

1. Դուք գրագետ ուսուցիչ եք, ով կարծում է, որ ներառականությունը իրավունքների և բազմազանության խնդիր է, որից օգտվում է ամբողջ դասարանը:
2. Դուք լսողության խանգարում ունեցող երեխայի ծնող եք: Ձեր երեխան բարձր առաջադիմություն ունի մի դպրոցում, որտեղ նա պատշաճ աջակցություն ունի:
3. Դուք փոքրամասնության համայնքից եք և կարծում եք, որ եկել եք այս երկիր՝ ձեր երեխաներին ավելի լավ ապագա ապահովելու համար, քան դուք ունեիք:

Դուք համոզված եք, որ ձեր երեխան լավ կսովորի դպրոցում, թեև ներկայումս նա չի խոսում մեծամասնության լեզվով: Բայց դուք գիտեք, որ նա խելացի է և ճիշտ օգնության դեպքում կհաղթահարի դա:

4. Դուք տեսողության խանգարում ունեցող 3 տարեկան երեխայի ծնող եք: Համայնքում ձեզ ասում են, որ նրան չպետք է բերեք համայնքի կողմից կազմակերպված Անկախության օրվա տոնակատարությանը, «քանի որ նա կարող է վնասել իրեն»: Բայց դուք գիտեք, որ սա պարզապես արդարացում է, իսկ իրական պատճառն այն է, որ չեն ցանկանում, որ նա այնտեղ լինի:

5. Դուք համայնքի ազդեցիկ անդամ եք, ով ունի հաջողակ բիզնես, և դուք հավատում եք ներառականությանը:

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե մասնակիցների կողմից նշված տեսակետներից որն եք հասկանում, բայց որի հետ համաձայն չեք: Ո՞րի հետ եք համաձայն:

## ԴԱՍ 2. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշակերտների բազմազանությունը նպաստավոր է ԲՈԼՈՐԻ համար: Մի կողմից՝ արդեն գիտենք դպրոցում և դասարանում բազմազան աշակերտական կազմ ունենալու առավելությունները: Այս գաղափարները ներկայացված են այստեղ, որպեսզի ուսուցչին օգնեն խորհել հասարակության կողմից բազմազանության դեմ առարկությունների մասին և հակադարձել դրանց:

### Դպրոցի տնօրենների դեպքում՝

- Զարգացնում է ղեկավարելու նրանց կարողությունները:
- Բարձրացնում է նրանց վարկանիշը համայնքներում:
- Զարգացնում է նրանց կարողություններն ու ներուժը՝ դառնալու մենթորներ մյուս դպրոցների համար:
- Դրա միջոցով ձեռք է բերում իր աշխատակիցների հարգանքն ու վստահությունը:

### Ուսուցիչների դեպքում՝

- Բարձրացնում է ճկունությունը՝ կրթական տարբեր կարիքներ բավարարելու համար:
- Ընդլայնում է նրանց պատկերացումները բազմազան համայնքների մասին:
- Կատարելագործում է նրանց մանկավարժական հմտությունները, որպեսզի բոլոր երեխաները կարողանան մասնակցել դասերին և ավելի մեծ հաջողությունների հասնել:
- Դրա շնորհիվ ձեռք են բերում ծնողների և համայնքների հարգանքն ու վստահությունը:

### Հասարակության դեպքում՝

- Հաշմանդամություն ունեցող և տարբեր մշակույթներ ներկայացնող անձինք հարստացնում են մարդկային փորձի բազմազանությունը, և քանի որ սոցիալական փոփոխություններ են կատարվում՝ տարբեր կարողություններ ունեցող մարդկանց ներառելու համար, ընդհանուր արդյունքը լինում է հասարակության բարելավումը բոլոր մարդկանց համար:
- Կայուն հարաբերությունների բարելավում:
- Խնդիրների լուծման տարբեր մոտեցումների ընդունումը խթանում է նորարարությունը բազմաթիվ ոլորտներում և մեծացնում ապրանքների, համակարգերի և ծառայությունների համախմբվածությունը, արտադրողականությունը և կայունությունը:

### Աշակերտների դեպքում՝

Երեխաները մեծանում են ավելի ու ավելի «գլոբալացվող» հասարակության մեջ և պետք է կարողանան ճիշտ շփվել տարբեր մշակույթներ կրողների հետ,

եթե ցանկանում են հաջողության հասնել կյանքում: Տարբեր մշակույթներ կրող երեխաների հետ աշխատելը և ընկերանալը հնարավորություն է տալիս երեխաներին.

- Իրենց սեփական համայնքից բացի նաև այլ համայնքներից սովորել նրանց բնորոշ մշակույթի տարրեր՝ լինեն դրանք երգեր, պատմություններ, թե տվյալ մշակույթին հատուկ վարքագիծ,
- Զարգացնել կարեկից լինելու կարողությունը,
- Զարգացնել սեփական տեսակետից բացի այլ տեսակետներ հասկանալու և իրադարձությունների, հարցերի և գաղափարների մասին տարբեր տեսակետներ ունենալու կարողությունը,
- Սովորել ավելի լավ ու արդյունավետ հաղորդակցվել, երբ ստիպված են ինչ-որ բան բացատրել մեկին, ում ուսուցման լեզուն իր մայրենի լեզուն չէ,
- Սովորել լինել ճկուն,
- Սովորել տարաձայնությունների դեպքում գտնել ոչ բռնի լուծումներ, որոնք խթանում են փոխզիջումն ու բանակցությունները ընդհարումների և անհամաձայնությունների ընթացքում,
- Ձեռք բերել կարողություններ և արժեքներ, որոնք վեր են իրենց համայնքների կարողություններից և արժեքներից,
- Սովորել տոկունություն նրանցից, ում կյանքն այնքան էլ հեշտ չէ, որքան իրենցը,
- Սովորել ապրել տարբեր իրողությունների պայմաններում (փոքրամասնությունների երեխաները հաճախ մեկ օրվա ընթացքում առերեսվում են տարբեր իրականությունների՝ դպրոցում և տանը),
- Կարող են սովորել մեկ այլ լեզու կամ գոնե իմանալ, թե ինչպես սովորել մեկ այլ լեզու,
- Սովորել մարդու գեղարվեստական արտահայտման նոր ձևեր,
- Ընդլայնել իրենց ընկերական շրջանակը,
- Սովորել հարգել տարբերությունները,
- Գնահատել մյուս աշակերտների կարողություններն ու տաղանդը,
- Սովորել պաշտպանել այն, ինչը ճիշտ է, ոչ թե սահմանված կարգը:

Ստորև բերված գաղափարները վերաբերում են դասարանում հաշմանդամություն ունեցող երեխաների ներկայության առավելություններին:

### Կույր կամ թույլ տեսողություն ունեցող երեխաների կողքին գտնվելով՝ մյուս երեխաները սովորում են՝

- Ինչպես սովորել մեզանից տարբերվող մարդկանցից,
- Ինչպես հնարավորինս ճշգրիտ և լիարժեք նկարագրել առարկաները, որպեսզի կույր երեխան ճիշտ պատկերացնի երեխաների նկարագրածը: Սա օգնում է երեխաներին՝

- հետևել, որպեսզի կարողանան փոխանցել այն, ինչ անհրաժեշտ է,
- ընդլայնել իրենց բառապաշարը և հատկապես սովորել ու ավելի շատ օգտագործել ածականներ ու բայեր՝ նկարագրելու, թե ինչ է կատարվում կամ ինչ հրահանգների պետք է հետևել,
- սովորել հնարել և խաղալ նոր խաղեր՝ կապված շոշափելիքի կամ հոտառության հետ,

- Զարգացնել հաղորդակցման հմտություններ՝ ավելի լավ, ավելի հստակ հաղորդակցություն ապահովելու համար,
- Կարեկցելու (էմպատիա) ունակություն. նրանք մտածում են, թե որտեղ դնեն իրենց իրերը, որ դրանք չխանգարեն, ինչպես ընդգրկեն թույլ տեսողություն ունեցող կամ կույր երեխային խաղերում և գտնեն տեսողության հարցը շրջանցելու ուղիներ՝ այդ կերպ լուծելով խաղը հարմարեցնելու խնդիրը,
- Հարգանք. նրանք հասկանում են, թե որքան լավ է սովորում երեխան՝ չնայած տեսողության սահմանափակումներին,
- Ընկերություն:

**Կույր դասընկերոջ համար միջավայրի անվտանգության ապահովումը սովորեցնում է նրանց՝**

- Հոգ տանել իրենց կրտսեր եղբայրների և քույրերի անվտանգության մասին տանը, զգուշանալ կրակից, իրենց շրջապատող միջավայրում թափթփված չթողնել սուր առարկաներ, այդ թվում՝ ասեղներ, դանակներ և այլ վտանգավոր իրեր:
- Դառնալ ավելի կոկիկ և կազմակերպված իրենց կյանքում:
- Ստեղծել բարենպաստ, հաճելի միջավայր (օրինակ՝ տնկել ծաղիկներ, խոտաբույսեր (այդ թվում՝ ռեհան կամ անանուխ), որոնք անուշ բույր ունեն, փափուկ են դիպչելիս, կամ հետաքրքիր ձև ունեն) թույլ տեսողություն ունեցող երեխայի համար: Միևնույն ժամանակ, դա կօգնի նրանց ավելի լավ զգալ իրերի կառուցվածքն ու հոտը, քանի որ այդ ամենը նրանք սովորում են տեսողական խնդիրներ ունեցող երեխայից:
- Ավելի շատ բան իմանալ իրենց սեփական հոտառության մասին, քանի որ նրանք ստիպված են լինում ավելի գիտակցաբար մոտենալ այդ հարցին:
- Բարելավել սեփական ընթերցանությունն ու առոգանությունը, քանի որ նրանք բարձրաձայն կարդում են տեսողության խանգարում ունեցող իրենց ընկերոջ համար:

**Խուլ կամ թույլ լսող երեխաների կողքին գտնվելով՝ մյուս երեխաները սովորում են.**

- Ինչպես խոսել հստակ և ճիշտ տեմպով, երբ նրանք «խոսում են» շրթունքների շարժումով խոսքը հասկանալու կարողություն ունեցող երեխաների հետ,

- Օգտագործել տարբեր բառեր, որոնք հեշտ է հասկանալ շրթունքների շարժումներին հետևելու միջոցով,
- Ավելի պարզ, ընթեռնելի գրել և լավ նկարել,
- Օգտագործել ժեստերի լեզուն,
- Հետևել մարմնի լեզվին և դեմքի արտահայտությանը՝ ուրախության, անհարմարության, շփոթության և այլ զգացումները հասկանալու համար, արդյունքում հենց իրենք էլ ավելի զգայուն են դառնում,
- Լսողությունից բացի ավելի լավ ճանաչել շոշափելիքի, հոտառության և մյուս զգայարանները,
- Կենտրոնանալ ինչ-որ բանի վրա՝ առանց շեղվելու, քանի որ նրանք կենտրոնանում են լսողության խանգարում ունեցող իրենց ընկերոջ ասածի վրա:

**Չքայլող, քայլելու դժվարություններ ունեցող կամ անվասայլակով տեղաշարժվող երեխաների կողքին գտնվելով՝ մյուս երեխաները սովորում են.**

- Չվազվզել և չհրել քայլել փորձող մարդուն,
- Համբերատարություն, քանի որ նրանք քայլում են դիմացինի տեմպով,
- Զգուշանալ քայլուղիների վրա հանդիպող խոչընդոտներից,
- Խաղալ այնպիսի խաղեր, որոնց համար չի պահանջվում քայլել կամ վազել, բայց խմբային են, ինչպես սեղանի խաղերը, քարտերով խաղերը, երևակայություն կամ լեզվի ճարտարություն պահանջող խաղերը և այլն:

**Հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաներից մյուս երեխաները սովորում են.**

- Ինչպես օգնություն առաջարկել հաշմանդամություն ունեցող երեխային՝ առանց ամեն ինչ նրա փոխարեն անելու: Այս մոտեցումը ճիշտ է հաշմանդամության բոլոր տեսակների դեպքում: Մյուս երեխաները սովորում են օգնել հաշմանդամություն ունեցող երեխային՝ առանց նրան չափից դուրս կախվածության մեջ դնելու: Նրանք սովորում են իշխող դեր չստանձնել միասին որևէ առաջադրանք կատարելիս: Արդյունքում փոխադարձ հարգանք է ձևավորվում երկու կողմերի միջև: Հաճախ երեխաների մոտ սա ավելի լավ է ստացվում, քան մեծահասակների մոտ, որոնք փորձում են չափից ավելի պաշտպանել երեխային:
- Ընդունել, որ հաշմանդամություն ունեցող երեխան ունի այլ ունակություններ. ուժեղ է որոշ առարկաներից, լավ բնավորություն ունի կամ համակրելի անձնավորություն է, նրա հետ զվարճալի է և այլն, ինչը հնարավորություն է տալիս, որ բոլոր երեխաներն առաջին հերթին միմյանց որպես երեխա ընկալեն:

- Ավելի զարգացնել իրենց ստեղծագործական և խնդիրներ լուծելու կարողությունները, քանի որ հարմարեցնում են խաղերը հաշմանդամություն ունեցող երեխային մասնակից դարձնելու համար (ավելի շատ սեղանի խաղեր խաղալ երեխաների հետ, ովքեր չեն կարողանում քայլել, ֆուտբոլ խաղալ գնդակով, որի մեջ տեղադրված է զանգակ չտեսնող երեխայի հետ խաղալու համար, լրացուցիչ վիզուալ խաղեր լսողության խանգարում ունեցող երեխայի հետ և այլն):

**Դասարանում մյուս երեխաները հաշմանդամություն ունեցող երեխաներին կարող են օգնել տարբեր ձևերով.**

- Նրանց կարող են տալ իրենց տետրերը, որպեսզի հաշմանդամություն ունեցող երեխաները կարողանան աշխատանքի մի մասը տանը կատարել,
- Կարող են գրառումներ կատարել նրանց փոխարեն՝ հենց իրենց տետրերի տակ պատճենաթուղթ դնելով,
- Թելադրել ուսուցչի՝ գրատախտակին գրածը,
- Ինչ-որ բան բացատրել ընդմիջման ժամանակ կամ դասերից հետո,
- Կարդալ գրատախտակին կամ գրքում գրված հրահանգները,
- Գրել հրահանգները չլսող երեխայի համար:

Ներառական կրթություն իրականացնող դասարանում երեխաները միմյանց օգնում են սովորել միասին: Ուսուցիչը պետք է հոգ տանի, որ չստացվի կամ չընկալվի այնպես, թե ի վերջո երեխաներն են անում իր աշխատանքը: Օրինակ՝ եթե պետք է հրահանգներ լինեն, ապա ուսուցիչը կարող է դրանք գրառել նախապես և տալ երեխային, որպեսզի մյուս երեխաները ստիպված չլինեն ամեն անգամ գրել նրա համար: Հնարավորության դեպքում տեքստը կարող է խոշորացվել, որպեսզի մյուս երեխաներն ամեն անգամ ստիպված չլինեն կարդալ իրենց ընկերների համար:

Երեխաները կարող են օգնել մյուսներին.

- Կատարել առաջադրանքներ, որոնք հաշմանդամություն ունեցող երեխաները չեն կարողանում,
- Նրանց մասնակից դարձնել իրենց խաղին,
- Ընկերություն անել նրանց հետ,
- Այցելել նրանց տուն,
- Թույլ չտալ, որ նրանց նեղացնեն, անուններ դնեն կամ ծաղրեն, ինչպես իրենց մյուս բոլոր ընկերների դեպքում:

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե արդյո՞ք կային նոր գաղափարներ օժանդակ նյութում: Արդյո՞ք դրանք համալրեցին քննարկումների ընթացքում բարձրաձայնած Ձեր գաղափարները:

Թվարկեք 3 բան, որ Դուք կանեք Ձեր դասարանում՝ բազմազանությունը սովորեցնելու կամ մոդելավորելու համար: Ինչո՞ւ ընտրեցիք հենց այդ երեքը: Ինչո՞ւ են դրանք կարևոր:



**Հիմնական գաղափարներ**

- Մանկավարժները կարող են բարելավել արդարացիությունը կրթական համակարգում՝ մարտահրավեր նետելով մարգինալացված երեխաների և ընտանիքների մասին տարածված համոզմունքներին, առասպելներին և պատկերացումներին:
- Տարբեր մշակույթների համադրությունը նպաստում է հարուստ գիտելիքների և փորձի փոխանակմանը երեխաների միջև մի դասարանում, որտեղ բոլոր մշակույթներն արժևորվում են:
- Մարգինալացված երեխաներին ավելի լավ սպասարկելով՝ ուսուցիչներն ավելի լավ են սպասարկում բոլոր երեխաներին:
- Բազմազանությունը պետք է ուսուցիչների կողմից ներդրվի դպրոցներում բոլոր մակարդակներում՝ նախադպրոցականից մինչև ավագ դպրոց:

# ԴԱՍ 2. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.3. ԱՐԴԱՐԱՑԻՈՒԹՅԱՆ ԲԱՑԸ ԼՐԱՑՆԵԼԸ

## Քննարկենք արդարությունը



Խմբային աշխատանք

Դիտարկեք ստորև բերված իրավիճակները և որոշեք՝ արդարացի են, թե ոչ: Եթե ոչ, ապա ի՞նչը կփոխեիք կամ կավելացնեիք:

### Իրավիճակ 1.

Դպրոցն առաջին անգամ ունենալու է լսողական խանգարում ունեցող երեխա: Դպրոցի տնօրենն ապահովել է, որ տարրական դասարանի ուսուցիչը սովորած լինի ժեստերի լեզուն, իսկ ուսուցիչներն իրենց դասարանների աշակերտների հետ խոսեն այն մասին, որ վերջիններս չմոռանան դեմքով դառնալ դեպի աղջիկը նրա հետ խոսելիս, չբղավեն նրա վրա, խոսեն հստակ և ոչ շատ արագ: Դպրոցում կարծում են, որ պատրաստ են երեխային ընդունելու:

### Իրավիճակ 2.

Նախակրթարանում կա երկու էթնիկական խումբ՝ մեծամասնության և փոքրամասնությունների խմբեր: Փոքրամասնությունների խմբի երեխաները չեն խոսում մեծամասնության լեզվով, որն ուսուցման լեզուն է: Նրանք սովորում են իրենց լեզվով (նյութերը թարգմանվել են), իսկ մեծամասնության լեզուն անցնում են որպես դասավանդման առարկա: Նրանց դասավանդում են իրենց իսկ էթնիկական խմբին պատկանող ուսուցիչները, ովքեր տիրապետում են երկու լեզվին էլ: «Այսպիսով, այնպես ենք անում, որ նրանց համար հարմար լինի դասավանդումն իրենց մայրենի լեզվով և հենց իրենց ուսուցիչների կողմից, սակայն նրանք սովորում են նաև մեծամասնության լեզուն, որպեսզի հետագայում անբարենպաստ վիճակում չհայտնվեն: Նրանք միմյանց հետ ազատ շփվում են նախաճաշի և խաղի ժամերին, և իհարկե, արտադասարանական միջոցառումների ժամանակ»:

### Իրավիճակ 3.

Ուսուցչուհին տեղյակ է, որ իր դասարանի երեխաներից մեկը լրացուցիչ պարտականություններ ունի, քանի որ հայրը հիվանդացել է, և ստիպված ինքն է կրտսեր քրոջը տանում դպրոց: Այդ պատճառով նա դասին գալիս է մշտապես ուշացած, և նրան կարգապահական կանոնների խախտման համար պարբերաբար դասերից հետո պահում են: Ուսուցչուհին այս ժամանակն օգտագործում է, որպեսզի օգնի նրան լրացնել օրվա սկզբում բաց թողածը, և նրան ավելի շուտ է թողնում տուն գնալ, քան մյուս պատժվածներին: Երբ

երեխաներից մեկը սկսում է բողոքել, նա որոշում է հաջորդ շաբաթ երեխաների հետ խոսել արդարության մասին մի պատմության օրինակով:

### Իրավիճակ 4.

Երկրում կան շրջաններ, որտեղ համայնքը բավականաչափ ապահովված չէ վաղ մանկության զարգացման (ՎՄԶ) ծրագրերով: Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչները աշխատանքի նշանակվեցին այդ շրջաններում: Կառավարությունը պնդում է, որ սա իրենց հնարավորություն է տալիս հավասարապես սպասարկել համայնքները:



**Հիմնական գաղափարներ**

- Անարդար համակարգերը բերում են ռեսուրսների ոչ արդարացի բաշխում, ինչը հանգեցնում է որոշ խմբերի շարունակական մարգինալացմանը և մյուսների գերիշխող դիրքին:
- Սովորողներն ունեն տարբեր ունակություններ և անհատականություն, և կարևոր է, որ ուսուցիչները խթանեն սոցիալական արդարությունը դասարանում:
- Դեռևս ՎՄԶ մակարդակում անարդարության վաղ շտկումը երաշխավորում է, որ երեխաները մեծանալով չեն մտածի, որ իրենք մյուսներից լավն են կամ նրանցից վեր են:
- Արդարացիությունն ու արդարությունը կրթական ոլորտում մարդու իրավունք է. որպես ուսուցիչ և մանկավարժ՝ մեր պարտականությունն է այն խթանել մեր ազդեցության ոլորտներում:

**Նշումներ**

# ԴԱՍ 2. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.4. «ԿԵՆԴԱՆԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ». ԳՆԱՀԱՏԵԼ ԵՎ ՀԱՐԳԵԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈՐՁԸ

## Մշակութային իրազեկություն

Խմբային աշխատանք

Այս սցենարները պահանջում են քննադատական վերլուծություն բոլոր սովորողներին կարևոր նշանակություն տալու, նրանց հարգելու և աջակցելու վերաբերյալ:

### Սցենար 1

Դպրոցի տնօրենը կանչում է այն աշակերտի ծնողներին, ով, անընդհատ խոսելով և անեկդոտներ պատմելով, խանգարում է դասը: Երեխան համայնքի փոքրամասնությունների խմբից է: Ծնողներն իրենց հետ բերում են համայնքի ավագանու անդամին, որպեսզի վերջինս տնօրենին բացատրի, որ իրենց մշակույթում ծիծաղելն ու անեկդոտ պատմելն առավելություն է համարվում:

**Իրավիճակի հետ կապված մտորելու հարցեր**

- Արդյո՞ք անհրաժեշտ էր տնօրենի միջամտությունն այդ հարցին, թե՞ ուսուցիչը կարող էր այն լուծել իր մակարդակում: Օգտվեք մշակութային իրազեկության շրջանակից՝ ձեր պատասխաններն ուղղորդելու համար:
- Ինչպե՞ս կարող է դպրոցը նախապատրաստվել հանդիպման անցկացմանը: Ի՞նչ պետք է ներառի ծնողների, տնօրենի և դասղեկի միջև զրույցը:
- Ի՞նչ լուծում կարող է ստանալ իրավիճակը, եթե անհրաժեշտ է հարգել բոլորի տեսակետները:
- Կարո՞ղ է արդյոք ուսուցիչը հնարամիտ կերպով օգտագործել երեխայի անհատական հատկանիշները՝ միաժամանակ պահպանելով դասարանի կանոնները:

### Սցենար 2

Ուսուցիչը պատմության դաս է անցկացնում եվրոպացիների կողմից Աֆրիկայի գաղութացման վերաբերյալ: Նա ասում է, որ Եվրոպան գաղութացրել է Աֆրիկան և շատ օգուտներ բերել գաղութացված երկրներին:

**Մտորելու հարցեր**

- Ձեր կարծիքով՝ արդյո՞ք սա միակ տեսակետն է գաղութացման մասին, որը պետք է ներկայացնել: Արդյո՞ք այն հարգում է բոլոր աշակերտների պատմությունները:
- Ինչպե՞ս կարող է ուսուցիչն ընդլայնել ուսումնական ծրագիրը՝ այլ տեսակետներ առաջարկելու համար:

## Սցենար 3

Սովորելու դժվարություններ ունեցող երեխան դժվարանում է սովորել նոր դպրոցում և այլևս չի ցանկանում դպրոց գնալ: Ուսուցչուհին ու ծնողները հանդիպում են՝ քննարկելու, թե ինչու է տարրական դպրոցից միջնակարգ դպրոց անցումը դժվար եղել երեխայի համար:

**Մտորելու հարցեր**

- Արդյո՞ք անհրաժեշտ է երեխային ուղղորդել դպրոցի հոգեբանի մոտ:
- Ի՞նչ կարող է պարզել ուսուցչուհին երեխայի մասին ծնողներից:
- Էլ ո՞ւմ կարող է նա դիմել:

## Սցենար 4

Ծնողական ժողովի ժամանակ սոցիալապես անապահով ընտանիքի երեխայի ծնողներին ասում են, որ իրենց երեխան դժվարանում է մաթեմատիկայից:

Ծնողներն ուսուցչուհուն ասում են, որ զարմացած են, քանի որ նա դասերից հետո աշխատում է ընտանեկան խանութում և երբեք չի սխալվում գումարի և հաճախորդներին վերադարձվող մանրի հարցում:

**Մտորելու հարցեր**

- Ուսուցչուհին գիտե՞ր, որ երեխան երբեմն աշխատում է ընտանեկան խանութում: Ինչպե՞ս այդ տեղեկությունը կփոխեր նրա մոտեցումը խնդրին:
- Ի՞նչ կարող է պարզել և փոխել ուսուցչուհին, որպեսզի օգնի երեխային մաթեմատիկայից ավելի լավ արդյունքներ ունենալ:
- Արդյո՞ք ուսուցչուհին պետք է ենթադրեր, որ երեխան դժվարանում է մաթեմատիկայից (ուշադրություն դարձրեք ուսուցչուհու կողմից օգտագործվող լեզվին՝ ելնելով նրա ենթադրություններից/կանխակալությունից):
- Գրի առեք, թե ինչ նոր գաղափարներ և տեսակետներ է այն առաջարկում սցենարները ներկայացնելու համար:

**Սցենար N ____**



Ակտիվ հղումներ

Լրացուցիչ տեղեկատվություն.
**«Դեպի մշակութային իրազեկություն»**

Ինքնանդրադարձ (ռեֆլեքսիա)

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

«Մշակութային իրազեկության հասնելու ճանապարհը պահանջում է փորձառություն, այդ փորձառությունից դասեր քաղելու և գործելու պատրաստակամություն»:

Ջերոմ Հ. Հենլի

Ներքևում բերված մտքերը կօգնեն ձեզ մտածել որոշակի խմբի մասին, որի մասին շատ քիչ բան գիտեք: Դա կարող է լինել էթնիկ փոքրամասնություն, մեկ այլ մշակույթի պատկանող փախստականներ կամ գյուղական, ոչ թե քաղաքային բնակավայրերից եկածներ:

**Անձնական վերլուծություն (ռեֆլեքսիա).** Անհրաժեշտ է կարգավորել այն ոլորտները, որոնց մասին սահմանափակ պատկերացում ունենք, ինչպես նաև գիտակցել, թե ինչպես կարող է մեր անձնական կանխակալությունն ազդել ուսուցման վրա:

Նշե՛ք այն թեմաները, որոնց մասին կուզենայիք ավելին իմանալ: Մասնավորապես.

**1. Ինչպե՞ս է մշակույթն ազդում մարդկանց տեսակետների վրա հետևյալ ոլորտներում.**

☐ կրթություն
☐ դերն ընտանիքում
☐ կրոն
☐ սեռային/գենդերային դերեր
☐ սովորույթներ կամ սնահավատություն
☐ այլընտրանքային բժշկություն
☐ զբաղվածություն
☐ ժամանակի ընկալում

☐ առողջություն

☐ հաշմանդամություն

☐ արևմտյան բժշկության արժեքը

**2. Ինչպե՞ս է մշակույթն ազդում երեխաների դաստիարակության վրա հետևյալ իրողությունների առնչությամբ.**

☐ կարգապահություն

☐ հագնվելը

☐ զուգարանից օգտվելը

☐ սնվելը

☐ իր վրա աշխատելու կարողությունը

☐ ապագայի սպասելիքները

**3. Ինչպե՞ս են աշակերտների մշակութային նորմերն ազդում հաղորդակցման վրա հետևյալ առումներով.**

☐ աչքերի մեջ նայելը

☐ միջանձնային տարածություն

☐ ժեստերի օգտագործում

☐ հարմարավետություն լռության դեպքում

☐ հերթով որևէ բան անելը

☐ զրույցի թեմաները

☐ ողջույնի ձևեր

☐ ընդհատելը

☐ հարցեր տալը և հարցերին պատասխանելը

**4. Ինչպե՞ս է մշակույթն ազդում հետևյալ իրողությունների վրա.**

☐ ծնող-ուսուցիչ հարաբերություններ

☐ առաջադրանք կատարելը և գնահատելը

☐ աշակերտ-ուսուցիչ հարաբերություններ

☐ աշակերտների մասնակցությունը դասին

☐ սպասելիքները տնային աշխատանքից

☐ համապատասխան բովանդակային գիտելիք

☐ ուսումնառության ձևեր

☐ աշակերտի կարգապահություն

Քննարկումներ

Քննարկեք, թե ի՞նչ նոր գաղափարներ և տեսակետներ է առաջարկում ստորև ներկայացված օժանդակ նյութը՝ սցենարներում առաջադրված խնդիրները գործնականում լուծելու համար:

## Աշակերտների մշակույթն արտացոլող մեթոդների գործածում: Որոշ խորհուրդներ մշակութային առումով իրազեկ պրակտիկայի վերաբերյալ

1. Ուսուցողական վարժությունները կատարեք տարասեռ խմբերով և հաճախ փոփոխեք խմբերի կազմը: Տեղեկացրեք, որ աշակերտներից ակնկալվում է դասարանում աշխատել բոլորի հետ ողջ տարվա ընթացքում: Կիրառեք ուսուցման մեթոդներ, որոնց համար պահանջվում է դեմ առ դեմ երկխոսություն: Սակայն հիշեք, որ հայերեն չիմացող աշակերտներին կարող է տագնապի մեջ գցել լեզուն վարժ տիրապետող աշակերտների հետ միևնույն խմբում ընդգրկելը: Աշակերտներին ճիշտ ընտրված զույգերով խմբավորելը կարող է ապահովել առավելագույն արդյունավետություն:

2. Իմացեք, որ աշակերտները կարող են արտահայտվել ոչ վերբալ կերպով: Խուսափեք լռությունը որպես անտարբերություն, ընդունակության կամ հետաքրքրության պակաս մեկնաբանելուց: Շատերը սիրում են խոսելուց առաջ ունենալ մտածելու ժամանակ, մինչդեռ ուրիշները մտածում են խոսելով: Ինքներդ էլ ցույց տվեք ոչ վերբալ արձագանք՝ ցույց տալու, որ հասկանում եք և ծանոթ եք հաղորդակցության այս ձևին:

3. Մտածեք գենդերային առումով չեզոք հարմարությունների մասին: Որոշ աշակերտներ չեն նույնականացվում իրենց ընկալվող սեռի հետ կամ կարող են ամաչել ֆիզիկական արատի պատճառով: Նման աշակերտները կարող են անհարմար զգալ զուգարաններից կամ լողավազաններից օգտվելիս:

4. Առանց աշակերտներին առանձնացնելու՝ նրանց տվեք իրենց մշակութային արժեքներով, տպավորություններով և փորձով կիսվելու հնարավորություն:

5. Համոզվեք, որ ցուցադրությունները և ուսումնական նյութերն արտացոլում են ձեր աշակերտների մշակույթները: Ձեռք բերեք համապատասխան գրադարանային նյութեր, խաղալիքներ և տիկնիկներ, որոնք նմանություն ունեն բոլոր երեխաների հետ՝ ներառյալ փոքրամասնությունների խմբերը, համապատասխան հագուստներ և խոհանոցային պարագաներ խաղատնակի տարածքում: Պատմությունները նույնպես պետք է արտացոլեն բոլոր մշակույթները: Օգտվեք համացանցային ուսումնական նյութերից, որոնք ցույց են տալիս մարդկանց, մշակույթների և տեսակետների բազմազանությունը:

6. Տեղյակ եղեք մշակույթի ակնհայտ և թաքնված դրսևորումներին: Ծանոթացեք աշակերտների մշակույթների անտեսանելի կողմերին, ինչպես նաև արտաքին նշաններին: Որևէ մշակույթի կերակուրները, տոներն ու նորաձևությունը

գնահատելուց բացի, ծանոթացեք այդ մշակույթին բնորոշ հաղորդակցման ոճերին, ակնկալվող դերերին և ընտանիքի ու համայնքի կառուցվածքին: Օրինակ՝ որոշ մշակույթներում զարմիկները համարվում են քույր-եղբայրներ, մորաքույրերն ու հորեղբայրներն ասես երկրորդ ծնող լինեն: Որոշ մշակույթներում տարիքը հարգում են որպես իմաստնության աղբյուր, մյուսներում՝ ոչ, և պարզապես միայն ծնողներից ու երեխաներից բաղկացած (նուկլեար) ընտանիքն են համարում «մերձավոր»:

7. Աշակերտների գիտելիքները զարգացրեք նրանց մայրենի լեզվով: Ուսումնասիրեք և ինքներդ էլ մի քանի հիմնական բառեր սովորեք: Սա աշակերտին ցույց է տալիս, որ բավականաչափ հոգ եք տանում նրա մասին նման ջանք գործադրելու համար: Բայց նաև խիստ կարևոր է, որ ՎՄՁ մակարդակում երեխաների հիմնական լեզուն լավ հասկանալի լինի: Օրինակ՝ բառեր, որոնք արտահայտում են «ցավ», «քաղց», «տխուր», «ուրախ», «ջուր», «զուգարան», «թաց», «կեղտոտ», «զվարճալի», «սիրել», «չսիրել» և այլ հասկացություններ, ինչպես են դիմում տատիկ-պապիկներին, մորաքույր-հորեղբայրներին ու զարմիկներին և այլն:

8. Օգտագործեք ուսուցման համար հարմար պահերը. հնարավորություններ, որոնք ինքնաբերաբար ներկայանում են որպես դասարանում աշակերտների հետ աշխատանքի հիանալի առիթ՝ նոր տպավորություններ ստեղծելով նրանց համար:

Օրինակ՝ երեխան ուշացած մտնում է դասարան և ասում, որ իր հայրը հիվանդ է և տզային տենդ ունի: Նրանք ապրում են ագարակում: Ուսուցիչը կարեկցանք ցուցաբերելով՝ օգտագործում է առիթն ու աշակերտի օգնությամբ մյուս աշակերտներին պատմում տիզի կենսական ցիկլի և այն մասին, թե ինչպես կարող է այն ազդել մարդկանց վրա ու հիվանդացնել: Աշակերտները ոչ միայն տեսնում են, թե ինչպես է ուսուցիչն օրինակի վրա կարեկցանք արտահայտում, այլ նաև իմանում կարևոր փաստեր տզերի և այն մասին, թե ինչպես կարող են նրանք վարակել որոշ վայրերում ապրող մարդկանց:

**Աղբյուրը՝** «Այստեղ գալիս են բոլորը»: Դասավանդումը միջմշակութային դասարանում» *(‘Here Comes Everyone’. Teaching in the Intercultural Classroom), 2010, Ալբերտայի ուսուցիչների ասոցիացիա* https://www.teachers.ab.ca/

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե ում է ձեռնտու, երբ ես աշխատում եմ այնպես, ինչպես հիմա, և ում ձեռնտու չէ: Իմ պրակտիկայում ի՞նչ է նշանակում մշակութային իրազեկություն  երեխաների, ընտանիքի, համայնքի համար: Ի՞նչ գիտեմ իմ դասարանի երեխաների լեզվի/լեզուների, պատմությունների կամ մշակույթների մասին: Քանի՞ տարբեր մշակույթ կրողներ կան իմ դասարանում:




- Կրթության ոլորտում մշակութային իրազեկությունը նշանակում է գիտակցել, հարգել և գնահատել տարբերությունները, գիտակցել մեր կանխակալությունները և պատրաստ լինել աշխատել սովորողների տարբերությունների և կարողությունների հետ:
- Մշակութային իրազեկությունը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ գործընթաց է և հնարավորություն է տալիս մշտապես ներկայացնել և արձագանքել նոր իրավիճակներին, փորձառություններին և հարաբերություններին:
- Մշակութային առումով իրազեկ ուսուցիչները դառնում են օրինակելի բոլոր երեխաների համար՝ թույլ տալով նրանց ներգրավվել և հասնել արդյունքների:

# ԴԱՍ 3. ՇՓՈՒՄԸ ԱՅԼՈՑ ՀԵՏ. ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դասընթացի ընթացքում գրանցեք հնարավորինս շատ կարևոր գաղափարներ (օգտագործեք կետեր, հիմնական բառեր և գաղափարներ, դիագրամներ կամ գծապատկերներ):

Գրի առեք Ձեզ մոտ ծագած հարցերը: Սա կօգնի Ձեզ ավելի խորացնել գիտելիքները:

Գրի առեք այն բացահայտումները, որոնք կցանկանաք հետագայում կիրառել:

# ԴԱՍ 3. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.1. ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԼԵԶՈՒՆ

Այս վարժությունը կօգնի ի մի բերել 1-ին և 2-րդ դասերից սովորածը և հնարավորություն կտա մեզ արդյունավետ հաղորդակցման միջոցով ձևավորել մշակութային իրազեկություն:

**Անհատական աշխատանք**

Հաղորդակցությունը երկկողմանի գործընթաց է առանձին մարդկանց կամ խմբերի միջև, որի ընթացքում փոխանակվում են տեղեկություններ, մտքեր, վերաբերմունք կամ զգացմունքներ: Լեզուն և մշակույթը սերտորեն փոխկապակցված են, ինչը հակված է երբեմն սխալ մեկնաբանել տարբեր մշակույթ կրող անձանց միջև փոխշփումների ժամանակ ասվածը: Ընկալումն ու իրականությունը տարբեր մարդկանց մոտ տարբեր են, ինչը ազդում է նրանց շփումների վրա: Ապահով միջավայրի ստեղծումը կարևոր է, որը թույլ կտա փոխանցել, վիճարկել մտքերը և վարել անհարմար զրույցներ՝ ավելի լավ փոխըմբռնման հասնելու համար: Կողմերը կարող են լիարժեք համաձայնության չգալ, բայց նրանք կհասնեն ընդհանուր փոխըմբռնման որոշակի մակարդակի:



**Ակտիվ հղումներ**

Լրացուցիչ տեղեկատվություն.
**«Հաղորդակցման լեզուն»**

Օրագրում գրառեք երեք ռազմավարություն, որոնք Դուք կարող եք օգտագործել ապահով միջավայր ստեղծելու և Ձեր մասնագիտական միջավայրում արդյունավետ զրույց վարելու համար:

Նշեք նաև աճի այն ոլորտները, որոնց վրա Դուք կցանկանայիք կենտրոնանալ՝ բարելավելու Ձեր հաղորդակցման հմտությունները:

Նշեք երկու մարտահրավեր, որոնց բախվել եք Ձեր աշխատավայրում՝ աշակերտների, մանկահասակ երեխաների, գործընկերների, ծնողների և այլոց հետ շփվելիս:

# ԴԱՍ 3. ԼԵԶՎԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Քննարկումներ**

Կարո՞ղ եք ստորև բերված պնդումներում առանձնացնել էթնոցենտրիզմը, մշակույթների տարբերությունների չգիտակցումը, կարծրատիպերը: Հիմնավորեք ձեր որոշումը:

- «Նրանք ամեն ինչ այլ կերպ են անում»:
- «Նա երբեք տնային աշխատանքը ժամանակին չի կատարում»:
- «Նա ասաց, որ մեր որդին բավականաչափ ջանքեր չի գործադրում»:
- «Կրթությունը նրանց համար կարևոր չէ: Իրենք երեխաներին դպրոց չեն ուղարկում»:
- «Նրանք տարօրինակ հագուստ են կրում»:
- «Նրանք չափազանց ակտիվ են և ունեն վարքի կառավարման հետ կապված դժվարություններ»:
- «Ինձ հետ այդ տոնով մի խոսիր»:
- «Ես դա չասացի»:
- «Նա դասերից հաճախ բացակայում է: Կարծում եմ նրա ծնողներին կրթությունը չի հետաքրքրում»:
- «Նա առաջադրանքը լավ չէր կատարել, որովհետև այն չափազանց բարդ էր նրա համար»:
- «Նա ցածր առաջադիմությամբ աշակերտուհի է»:

**Նշումներ**

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե ինչ նկատի ունեն այս պնդումները: Արդյո՞ք դրանք արժեքավոր դատողություններ են:

**Նշումներ**

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե ինչ զգացողություններ ունեիք ելույթի ընթացքում (պատասխանները կարող են լինել շփոթված, անհարմար, հիմար և այլն): Ի՞նչ նկատեցիք ունկնդրի ժեստերից: Ի՞նչ զգացողություններ ունեին ունկնդիրները:



**Հիմնական գաղափարներ**

- Այն, թե ինչպես ենք մենք շփվում միմյանց հետ, կարող է ցույց տալ, թե ինչպես ենք մենք մտածում, ինչ ենք զգում, ինչպես ենք ընկալում ուրիշներին, և ինչպես են նրանք մեզ ընկալում: Բացասական զգացմունքներն ու վերաբերմունքը կարող են փոխանցվել նաև ոչ վերբալ կերպով:
- Լեզուն, ոճը, ոչ վերբալ նշանները (ակնարկները) և միջմշակութային տարբերությունները կարող են խոչընդոտներ ստեղծել արդյունավետ հաղորդակցության համար:
- Միջավայրը, ներառյալ՝ հարաբերություններում ազդեցության անհավասարակշռությունը, ազդում է փոխշփումների վրա:
- Երբ հնարավորություն է տրվում տարբեր տեսակետներ արտահայտել, ապա խմբերը կարող են ավելի մոտիվացված լինել համագործակցելու և նորարական լուծումներ գտնելու:

## ԴԱՍ 3. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.2. ԱԿՏԻՎ ԼՍՈՒՄ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Անհատական աշխատանք**

Հետևյալ փակ հարցերը վերափոխեք բաց հարցերի.

- Լա՞վ ես:

_____

- Տխու՞ր ես:

_____

- Չե՞ք կարծում, որ այս զգեստը գեղեցիկ է:

_____

- Կա՞ որևէ այլ բան:

_____

Երբեմն կարող եք ստանալ պատասխան, որը գուցե անհրաժեշտ լինի հստակեցնել բաց հարցի միջոցով, օրինակ՝ «Ձեր կարծիքով՝ ո՞վ կհաղթի ընտրություններում»: Սա փակ հարց է, ուստի երբ ստանում եք պատասխանը, հստակեցրեք այն բաց հարցի միջոցով՝ ավելի գրավիչ զրույց սկսելու համար: Օրինակ՝ ինչու՞ եք այդպես կարծում:

### Փոքր երեխային՝

- Կարո՞ղ ես դադարեցնել լաց լինելը (երբ երեխան փքված է, հրում կամ բղավում է): Լինում են դեպքեր, երբ դուք պետք է այդ ասեք՝ պարզապես որևէ անցանկալի պահվածք դադարեցնելու համար, բայց ինչպե՞ս կվերաձևակերպեք դա կամ կշարունակեք բաց հարցով: Ինչպիսի՞ն կլինի այդ հարցը:
- Ցանկանում ես հագնել կապո՞ւյտ վերնաշապիկը, գուլպաները, տաբատը, թե՞ կարմիրները:
- Ցանկանում ես տու՞ն նկարել, թե՞ ծառ:
- Քեզ դուր եկա՞վ այդ պատմությունը:

# ԴԱՍ 3. ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 3.4. ԱԿՏԻՎ ԼՍՄԱՆ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ



**Խմբային աշխատանք**

| **Անվանում** | **Առաջին անգամ լսելը** | **Երկրորդ անգամ լսելը** |
|---|---|---|
| Ձայնի համապատասխան տոն | | |
| Ճշգրիտ վերաձևակերպում | | |
| Էմպատիա | | |
| Ոչ վերբալ նշաններ | | |
| Քաջալերող բառեր | | |
| Այլ | | |

**Աղբյուր՝** Կանադայի Էդմոնտոնի տարածաշրջանային կրթական կոնսորցիումի (ERLC) «Բոլոր սովորողների ներգրավում» ծրագրի շրջանակներում զրույցի վարման ուղեցույց»: Հասանելի է www.inclusiveeducationpdresources.ca հղումով:

Նկարագրեք Ձեր հարաբերություններն այն աշակերտի հետ, ում իսկապես սիրում եք: Ի՞նչն է բնութագրում Ձեր լավ հարաբերությունները:

Իսկ այժմ մտածեք այն աշակերտի մասին, ում հետ դժվար է հարաբերություններ հաստատել: Նշեք՝ ինչու: Ինչո՞ւ են հարաբերություններն այդքան բարդ և ինչպե՞ս կարող են բարելավվել:



**Հիմնական գաղափարներ**

- Իմաստն ըմբռնելու, զգացմունքները հասկանալու համար վերբալ և ոչ վերբալ վարքագծին հետևելը լսելու հիմնական հմտությունն է:
- Կարևոր է լսելու ընթացքում անհամաձայնություն չհայտնել, չզգուշացնել, չնախատել, գնահատական չտալ, չախտորոշել կամ չպահանջել տեղեկատվություն:
- Ակտիվ լսելու հմտությունները պահանջում են իմանալ անձնական կանխակալության, նախապաշարմունքների և կարծիքների մասին, ոչ թե դատողություններ անել:
- Կարեկցող լռությունը հնարավորություն է տալիս դիմացինին բարձրաձայնել այն, ինչ ուզում է հայտնել: Մարմնի լեզուն կարևոր է լռության մեջ, որպեսզի այն չընկալվի որպես անտարբերություն:
- Բաց հարցերը հնարավորություն են տալիս զրույցի վերահսկումը վերադարձնել այն անձին, ում տրվում են հարցերը:
- Ակտիվ լսելու հմտություններն օգնում են ուսուցիչներին կառուցել վստահելի փոխհարաբերություններ, ամրապնդել դպրոցի և ընտանիքի միջև համագործակցությունը՝ երեխայի ուսման հաջողություններն ապահովելու համար:

**Նշումներ**

## ԴԱՍ 3. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.3. ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԴՈՒՐՍ ԳԱԼՈՎ ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԵՐԵՐԻՑ

Այս վարժությունը հնարավորություն կտա Ձեզ կատարել ինքնանդրադարձ և կօգնի հասկանալ, թե ինչպե՞ս է Ձեր վերբալ և ոչ վերբալ վարքագիծն ազդում Ձեր և աշակերտների միջև փոխհարաբերությունների վրա:

Նկարագրեք Ձեր հարաբերություններն այն աշակերտի հետ, ում իսկապես սիրում եք: Ի՞նչն է բնութագրում Ձեր լավ հարաբերությունները:

Իսկ այժմ մտածեք այն աշակերտի մասին, ում հետ դժվար է հարաբերություններ հաստատել: Նշեք՝ ինչու: Ինչո՞ւ են հարաբերություններն այդքան բարդ և ինչպե՞ս կարող են բարելավվել:



Խմբային աշխատանք

## ԴՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԻՋԵՎ

Զույգերով քննարկեք հետևյալ սցենարները և դերախաղի միջոցով ներկայացրեք խմբին:

**Խորհուրդ.** Լսեք ապրումակցելով, փորձեք տարբերակել հույզերը, պարզաբանեք, պարզեք ավելին, պատասխանեք ոչ վերբալ և վերբալ ձևերով: Խուսափեք քննադատական բառեր օգտագործելուց. «քո խնդիրը...է», «ահա թե որտեղ է քո սխալը...», «լավ կլինես, պարզապես հիմա հանիր գիրքդ և կատարիր տնային առաջադրանքդ», «ավելի լավ է դու չ...»:

### Զրույց ուսուցչի նախաձեռնությամբ.

**1. Ուսուցիչ՝** «Տեսնում եմ, որ գրեթե ձեռք չես բարձրացնում, երբ հարցեր եմ տալիս»:

**Աշակերտ՝** Լռում է:

**Ուսուցիչ՝** «Դասին քիչ ես մասնակցում ...»:

**2. Ուսուցիչն աշակերտին, ով ամաչկոտ է և չի ցանկանում խոսել դասարանի առջև՝**

«Կուզենայի, որ այսօր դու ներկայացնեիր սահիկաշարը քո թիմի կողմից»:

**Աշակերտ՝** «Բայց X-ն ավելի լավ է այդ գործում, քան ես»:

**Ուսուցչի պատասխանը՝** _____

### Աշակերտների պնդումները.

**3. Աշակերտը ուսուցչին՝** «X-ը անկարգ է: Միշտ անախորժ վիճակների (փորձանքի) մեջ է հայտնվում» (պիտակավորում):

**Ուսուցչի պատասխանը՝** _____

**4. Աշակերտ՝** «X-ի վրայից հոտ է գալիս: Ես չեմ ուզում խաղալ նրա հետ: Մայրիկս ասում է, որ ստիպված չեմ խաղալ, եթե չեմ ուզում»:

**Ուսուցչի պատասխանը՝** _____

**5. Աշակերտ՝** «Կարծում եմ, որ մաթեմատիկայի այս առաջադրանքը չափազանց դժվար է»:

**Ուսուցիչ՝** «Կարծում եմ՝ դու պետք է ավելի շատ աշխատես: Փորձե՞նք»

**Աշակերտ՝** «Բայց ես չեմ կարող դա անել»:

Ի՞նչ պետք է անի ուսուցչուհին, եթե նա ընդունում է իր թույլ տեղը: Ինչպե՞ս կարող է ուսուցչուհին խոսել այդ ոլորտում թույլ լինելու մասին նրա ընկալման վերաբերյալ:

Պարզաբանելու համար ուսուցիչը պետք է բաց հարցեր տա:

**6. Աշակերտ՝** «Ինձ ոչ ոք չի սիրում»:

**7. Աշակերտ՝** «Ատում եմ դպրոցը»:

**8. Աշակերտ՝** «Հայրս հեռացել է: Նա կարող է էլ երբեք չվերադառնալ»:

**Նշումներ**

Օրագրում գրառեք այն երեք ռազմավարությունները, որոնք կօգագործեք դասարանում աշակերտների հետ Ձեր փոխշփումներում:



**Հիմնական գաղափարներ**

- Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները բնութագրվում են ազդեցության անհավասարակշռությամբ: Հարգալից և վստահելի հարաբերությունների զարգացումը ուսումնական աշխատանքի դրական միջավայր է ստեղծում:
- Ուսուցիչ-աշակերտ դրական հարաբերությունների հաստատումը ներառում է աշակերտին դասարանում և դասարանից դուրս ճանաչելու և լսելու ունակություն:
- Դասավանդման բովանդակությունը կարևոր է, բայց աշակերտների հուզական կարիքները բավարարելը, նրանց լսելը և դրական շփումների միջոցով մոտիվացնելը ավելի լավ արդյունքի հասնելու հնարավորություն են տալիս:
- Ակտիվ լսելը պահանջում է ուշադրություն և կարողություն: Այն օգնում է աշակերտներին հաղթահարել իրենց հույզերը/խնդիրները:
- Եթե ուսուցիչները ցույց տան ակտիվ լսելու օրինակներ, ապա աշակերտները կընդօրինակեն նրանց:

# ԴԱՍ 3. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.4. ՀԱՄԱԽՄԲՈՒՄ. ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այս վարժությունը կօգնի մեզ ի մի բերել և կիրառել նախորդ դասերից ստացված գիտելիքները, ինչպես նաև՝ սովորել կիրառել ծնողների հետ շփվելու և համագործակցելու ռազմավարություններ, գործիքներ և հմտություններ՝ աշակերտների՝ ուսման մեջ հաջողության հասնելու համար:



**Խմբային աշխատանք**

## ՍՑԵՆԱՐՆԵՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փորձեք շատ երկար չքննարկել իրավիճակի հեռանկարներն ու շարժընթացը: Մտածեք, թե ինչ կարելի է անել կամ ասել տվյալ պահին կամ առաջիկա մի քանի րոպեների ընթացքում՝ առաջ շարժվելու համար:

Սցենարում դերախաղեր պլանավորելիս մտածեք հետևյալի մասին.

- Ձեզ պատկերացրեք սցենարի հիմնական դերակատարների տեղում: Պատկերացրեք այն մտքերն ու զգացումները, որոնք մարդիկ կարող են ունենալ այդ պահին:
- Փորձեք մեխանիզմներ. նվազեցրեք պաշտպանական արձագանքը (տոնայնություն, մարմնի լեզու, հարգանք, կարեկցանք): Շարունակեք զրույցը (լսեք նրանց, տվեք բաց հարցեր, մի կողմ դրեք ձեր զգացմունքները և երկխոսեք, ոչ թե բանավիճեք):
- «CARE» մոտեցման կիրառմամբ նկարագրեք, թե ինչպես կարելի է վարել զրույցը, և ինչպես զրույցին մասնակցող անձինք կարող են ընդհանուր հայտարարի գալ առաջ շարժվելու համար:
- Ոչ վերբալ հաղորդակցություն. արդյոք այն կարեկցակա՞ն է, հեղինակավո՞ր, տխո՞ւր, պաշտպանակա՞ն...:

### Սցենար 1

### Օրինակների ուսումնասիրություններ միջմշակութային հաղորդակցության վերաբերյալ

Դուք 5-րդ դասարանի ուսուցիչ եք դպրոցներից մեկում և այս տարի ձեր դասարանում ունեք նորեկ երեխա Նարե անունով: Դուք նստեցրել եք նրան Եղիա անունով մի տղայի կողքին, ով սիրիահայ է: Մի քանի օր անց Նարեի մայրը գալիս է դպրոց՝ ձեզ հետ հանդիպելու: Նարեն դպրոցից տուն էր եկել հուզված, քանի որ դուք նրա կողքին նստեցրել եք սիրիահայ երեխայի, և ինքն այժմ հեռու է նստում իր ընկերուհուց: Ասում է, որ Եղիան լեզվին նույնիսկ լավ չի տիրապետում

և անընդհատ խնդրում է Նարեին օգնել իրեն: Ծնողները ձեզ ասում են. «Ի՞նչ է սովորելու մեր երեխան, եթե նա մյուս երեխային է սովորեցնում ամբողջ դասի ընթացքում: Դպրոցի ցուցանիշները կընկնեն»:

### Սցենար 2

Վեց եզդի երեխաների ծնողները եկել են դպրոց: Նրանք իրենց երեխաներին դպրոց են ուղարկել, որովհետև պետության պահանջն է այդպիսին: Միայն հիմա են նրանք պարզում, որ իրենց երեխաները ոչինչ չեն սովորում, դժգոհ են ու ձանձրանում են դպրոցում: Նրանք եկել են ձեզ (դպրոցի տնօրենին) ասելու, որ որոշել են երեխաներին այլևս դպրոց չուղարկել: «Ուսուցիչներն անընդհատ դժգոհում են նրանցից տնային առաջադրանքները չկատարելու համար: Երեխաները չեն ընկալում դասերը, իսկ գրքերը ոչինչ չեն պատմում եզդի ժողովրդի մասին: Նրանց համար տանը մնալն ավելի լավ կլինի: Առնվազն կարող են սովորել զբաղվել մեր ավանդական զբաղմունքներով, որևէ բան անել և իմանալ մեր ավանդական նիստուկացից: Նրանք մի քանի ժամ աշխատում են և օգնում հոգալ ծախսերը: Ի՞նչ իմաստ ունի դպրոցը, եթե նրանք չեն սովորում»: Ծնողներն այժմ մտածում են երեխաներին դպրոցից հանելու մասին: Բայց դուք չեք ցանկանում, որ երեխաները թողնեն ուսումը:

### ՎՄԶ. Սցենար 3

Տեսողության խանգարում ունեցող փախստական երեխայի ծնողները եկել են ձեզ հետ զրուցելու: Նրանց երեխան դպրոցում լավ է սովորում: Վերջին երկու շաբաթվա ընթացքում դպրոցը պատրաստվում էր սպորտային մրցումների: Փոքրերը մասնակցում էին գնդակներով և գդալներով էստաֆետային: Երեխան սրտնեղել էր. մյուս երեխաներից ոչ մեկը չէր ցանկանում նրան տեսնել իր թիմում, որովհետև նա լավ չի տեսնում և շատ է հեռանում վերջնագծից: Աղջիկն իր ծնողներին ասել էր. «Նրանք ասում են, որ իմ պատճառով իրենք տանուլ կտան մրցումը, և չեն ցանկանում, որ ես իրենց թիմում լինեմ»: Երկու ծնողներն էլ եկել էին խոսելու մանկավարժի հետ:

**Հարցեր, որոնց պետք է պատասխանեն սցենարի դերակատարները և թույլ տան ավելի մեծ խմբի անդամներին քննարկել և ներկայացնել իրենց մեկնաբանությունները:**

- Ի՞նչ անհատականություններ, մշակութային նորմեր և արժեքներ են ներկայացված դերախաղում:
- Ո՞րն է յուրաքանչյուր մասնակցի մշակութային տեսակետը:
- Կա՞ արդյոք հեղինակության դինամիկա դերախաղում: Ինչպիսի՞ն էր փոխշփումների տոնը: Արդյո՞ք դա ընդգծում էր ծնողի և ուսուցչի միջև հեղինակության տարբերությունը, թե՞ այն ենթադրում էր փոխշփում՝ խնդիրները լուծելու նպատակով: Ինչպե՞ս էր զգում զրույցի յուրաքանչյուր մասնակից:

- Ի՞նչ կարող է անել կամ ասել յուրաքանչյուր մարդ տվյալ իրավիճակում՝ այն ավելի դրական փոխշփման ուղղորդելու համար: Ինչպե՞ս կարող է ծնողի դերը ամրապնդվել և բարձրացվել ծնողների հետ ուսուցիչների շփումների միջոցով:
- Ինչպե՞ս է այս սցենարը մասնակիցներին հիշեցնում մի բան, որն արդիական է դպրոցում:



Ակտիվ հղումներ

Լրացուցիչ տեղեկատվություն.
**«CARE» մոտեցման պարզաբանման օրինակ»**

Նշումներ

**Սցենար N ____**

Նշումներ

Օրագրում գրառեք այն երեք ռազմավարությունները, որոնք կսկսեք փորձել կիրառել դպրոցում՝ ծնողների հետ Ձեր փոխշփումներում:



**Հիմնական գաղափարներ**

- Ուսուցիչ-ծնող հարաբերություններում վստահությունը սկսում է ձևավորվել ընդհանուր նպատակի, այն է՝ աշակերտի ուսումնառության հաջող արդյունքների ուղղությամբ աշխատելու փոխադարձ ցանկությունից:
- Հարցերի ոչ քննադատական ձևակերպումը այնպիսի խնդիրներ քննարկելիս, ինչպիսիք են իրենց երեխայի բացասական վարքը, թույլ չի տա, դադարեցնել ծնողների հետ զրույցը:
- Ծնողներն անգնահատելի ռեսուրս են ուսուցիչների համար, քանի որ վերջիններիս տրամադրում են տեղեկատվություն իրենց երեխայի տնային կյանքի և այն մասին, թե որն է լավագույնը տվյալ երեխայի համար սովորելու և դրական վարքին նպաստելու առումով:
- Ուսուցիչներն իրենց հերթին կարող են հնարավորություն տալ ծնողներին և ընտանիքներին բացահայտել իրենց խնդիրները և օգնել հաղթահարելու դրանք լուծումների վրա կենտրոնացած մոտեցումների, այդ թվում՝ «CARE» մոտեցման միջոցով:

**Նշումներ**

# ԴԱՍ 4. ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասընթացի ընթացքում գրանցեք հնարավորինս շատ կարևոր գաղափարներ (օգտագործեք կետեր, հիմնական բառեր և գաղափարներ, դիագրամներ կամ գծապատկերներ):

Գրի առեք Ձեզ մոտ ծագած հարցերը: Սա կօգնի Ձեզ ավելի խորացնել գիտելիքները:

Գրի առեք այն բացահայտումները, որոնք կցանկանաք հետագայում կիրառել:

## ԴԱՍ 4. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.1. ԳԵՐԻՇԽՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱ

Նշումներ

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե ինչու եք Դուք կարծում, որ մենք կարող ենք օգտագործել այս եզրույթը՝ դպրոցը բնութագրելու համար: Ի՞նչն է այն դարձնում հաստատություն: Ի՞նչն է նրան հեղինակություն հաղորդում: Ո՞վ ունի ազդեցություն դպրոցում:



Խմբային աշխատանք

Քննարկեք գործունեության մեկ ոլորտ Ձեր դպրոցից: Ստորև ներկայացված տեղեկատվությունը կօգնի Ձեզ քննարկումների ժամանակ:

- Դպրոցական կյանքի համակարգեր, ավանդույթներ և կանոններ: Ի՞նչ են մեզ ասում կանոններն ու համակարգերը դպրոցական արժեքների մասին: Կարո՞ղ եք թվարկել դպրոցական արժեքները: Որտե՞ղ են դրանք դրսևորվում, ի՞նչ փաստաթղթերում, ի՞նչ գործողություններում:
- Ուսումնական պլանի հետ կապված նկատառումներ: Ո՞վ է երևում, կամ ո՞վ չի երևում ուսումնական պլանում: Մտածեք նաև ՎՄԶ մակարդակում մանկահասակ երեխաների մասին: Ու՞մ խաղալիքները, պատմությունները, խոհանոցային պարագաներն են առկա խաղասենյակներում/խաղահրապարակներում: Ի՞նչ է ասում այդ ամենը դպրոցական արժեքների մասին:
- Դպրոցների, ուսուցիչների և աշակերտների համագործակցության մեխանիզմներ: Արդյո՞ք դրանք ՎՄԶ ուսումնական համայնքի մաս են կազմում, թե՞ ոչ: Ի՞նչ փորձառություն կբերեն նրանք ավելի ավագ աշակերտների ուսուցիչների համայնքին: Որքա՞ն հաճախ են ուսուցիչները համագործակցում: Ո՞վ է համագործակցում: Ինչպի՞սի նախագծերի շուրջ: Արդյո՞ք հնարավորություն է տրվում դպրոցում համագործակցության և փաստահեն ռազմավարություններ ներկայացնելու համար: Ո՞րն է տնօրենի դերը:
- Դպրոցի փոխգործակցությունը համայնքի հետ: Ինչպե՞ս է դպրոցը փոխգործակցում իր համայնքի հետ: Արդյո՞ք փոխգործակցությունը ներառում է դպրոցական համայնքային խորհուրդներ կամ ուսուցչական և ծնողական խորհուրդներ, դպրոցական համայնքի հանդիպումներ և այլն: Ի՞նչ է ասում դա դպրոցի արժեքների մասին:

**Նշումներ**

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե ինչ գրառում կարելի է կատարել «Ներառման հնարավորություններ» նոր վերնագրի տակ:



**Հիմնական գաղափարներ**

- Ներառականությունը վերաբերում է ոչ միայն հասանելիությանը, այլև ներգրավվածությանը, ներկայացվածությանը և ձեռքբերումներին: Արդյունավետ իրագործման դեպքում այն կարող է մեղմել երեխաների առջև ծառացած անհավասարությունները:
- Դպրոցը՝ որպես համակարգ, կարող է տարբեր կերպ բացառել երեխաներին՝ դպրոց գալ չկարողանալուց մինչև դաստիարակություն ստանալու և իրենց ողջ ներուժը զարգացնելու հնարավորության բացակայություն:
- Ներառականությունը պահանջում է համակարգված համադպրոցական մոտեցում, որտեղ ներառված են բոլորը և դպրոցի բոլոր տարրերը:
- Բացառումները կարող են լինել համակարգային, օրինակ՝ ուսումնական պլանում կամ դասագրքերում չընդգրկվածությունը:



**Ակտիվ հղումներ**

Լրացուցիչ տեղեկատվություն.

**«Դպրոցներ և ինստիտուցիոնալ հեղինակություն»**

# ԴԱՍ 4. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.2. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱ. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Կազմեք ազդեցության գաղափարի համադրական սխեման: Համադրական սխեման վիզուալ գծապատկեր է, որը պատկերում է գլխավոր թեման կամ գաղափարը և արձանագրում կենտրոնից դուրս եկող նոր և հարակից գաղափարները:






**Հիմնական գաղափարներ**

- Հեղինակությունն արտահայտվում է բազմաթիվ ձևերով, որոնք պարզունակ չեն, այսինքն՝ դիրք կամ հեղինակություն-իշխանություն:
- Յուրաքանչյուր ոք ունի որոշակի ձևով հեղինակության հնարավորություն, այդ թվում՝ աշակերտները:
- Հեղինակությունն ինքնին չեզոք է. այն կարող է օգտագործվել ինչպես դրական, այնպես էլ բացասական նպատակներով՝ ուրիշներին մարգինալացնելու/անբարենպաստ վիճակի մեջ դնելու համար:
- Ուսուցիչներն ավելի շատ կողմնակիցներ ունեն, քան կարծում են, ներառյալ՝ համայնքում և աշակերտների շրջանում:
- Ուսուցիչներն ունեն մտահոգություններ, որոնք կարող են մեղմվել խմբային լիազորությունների կիրառման և համատեղ գործողությունների միջոցով՝ համայնքներին և դպրոցից դուրս խմբավորումներին ներգրավելով:

# ԴԱՍ 4. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.3. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄ




**Ինչպե՞ս օգտվել գործողությունների առաջնահերթության սխեմայից**

Գործողությունների առաջնահերթության սխեմայից օգտվելու համար հետևեք նշված քայլերին.

**Քայլ 1**

Ստուգեք դպրոցի մանրամասն ուսումնասիրության արդյունքում կազմված փոփոխությունների ցանկը:

**Քայլ 2**

Գնահատեք դրանք ըստ ազդեցության (օրինակ՝ 0-ից (ազդեցության բացակայություն) մինչև 5 (առավելագույն ազդեցություն)), ըստ գործադրված ջանքերի (օրինակ՝ 0-ից (քիչ ջանքերի դեպքում) մինչև 5 (բավականաչափ ջանքերի առկայության դեպքում)):

**Քայլ 3**

Ձեր գնահատականներից ելնելով՝ տեղադրեք գործողություններն ըստ Գործողությունների առաջնահերթության սխեմայի:

**Քայլ 4**

Համապատասխան առաջնահերթություն սահմանեք և այնուհետև լրացրեք ստորև բերված աղյուսակը՝ փոփոխությունները պլանավորելու համար:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

| Փոփոխություն | Յուրաքանչյուր փոփոխության ռազմավարություն (դպրոցների կողմից կատարվող գործողություններ) | Ովքե՞ր են ներգրավված: Գործող անձինք՝ աջակիցներ, առարկողներ[1*] | Ո՞վ է ղեկավարում գործողությունը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |

Օրագրում գրառեք Ձեր մտքերը Փոփոխությունների սխեմայի կիրառականության վերաբերյալ:

[1*]Աջակիցները այն անձինք են, ովքեր կողմ են փոփոխություններին, իսկ առարկողները՝ նրանք, ում անհրաժեշտ է համոզել՝ իրենց աջակցությունը ստանալու համար:



**Հիմնական գաղափարներ**

- Ներառականության նպատակներով փոփոխությունները և՛ կուտակային են, և՛ միաժամանակյա, դպրոցական կյանքի մի ուղղությունը փոխելը կարող է ենթադրել մյուսների փոփոխություն:
- Փոփոխությունը կարող է ճնշող թվալ, բայց պատշաճ աջակցության դեպքում, պատասխանատու տնօրենի, լավ մշակված ծրագրի և հավաքական ջանքերի շնորհիվ դպրոցը կարող է ավելին անել, քան թվում է առաջին հայացքից:
- Որոշ կարևոր փոփոխություններ (օրինակ՝ ուսումնական պլանի կամ գնահատման փոփոխությունները) կարող են դժվար և ժամանակատար լինել: Միասին աշխատող դպրոցների և համայնքների հավաքական ազդեցությունը կարող է ուժեղ խթան հաղորդել դպրոցում ներառականության գործընթացին:
- Որոշ փոփոխություններ հեշտ է կատարել անմիջապես: Դրանք մեծ ազդեցություն են ապահովում տվյալ պահի համար: Մյուսներն ավելի բարդ և երկարաժամկետ են, բայց տևական ազդեցություն ունեն աշակերտների մասնակցության և ձեռքբերումների վրա:

**Նշումներ**

# ԴԱՍ 4. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

Խմբային աշխատանք

## Իրավիճակ 1

Դպրոցում հաճախակի են դարձել բուլինգի դեպքերը: Ուսուցիչները պատկերացնում են, թե ովքեր են կռվարարները, բայց դասարաններում բուլինգի և հետևանքների մասին խոսելը, կասկածյալներին տնօրենի մոտ ուղարկելն արդյունք չեն տալիս: Ի՞նչ կարող են անել:

## Իրավիճակ 2

Վերապատրաստման դասընթացի ժամանակ ուսուցիչները յուրացրել են նոր մեթոդիկա, համաձայն որի՝ սովորողներն ավելի շատ պատասխանատվություն են ստանձնում իրենց ուսման համար՝ երբեմն աշխատելով այլ սովորողների հետ՝ իրենց աշխատանքի վերաբերյալ կարծիք հայտնելու համար (հասակակիցների արձագանքը): Սա նոր իրողություն է, և աշակերտները նախ պետք է սովորեն, թե ինչպես կարծիքները ձևակերպել հարգալից և գրագետ լեզվով, որը նրանք առաջինը կիրառում են ուսուցչի հետ հարաբերություններում: Որոշ ուսուցիչների մոտ կա որոշակի մտահոգություն, որ սա կարող է ընդհարումների պատճառ դառնալ սովորողների միջև, եթե նրանք քննադատեն միմյանց, և/կամ դա կարող է ստիպել նրանց մտածել, որ իրենք նույնքան «լավն» են, որքան ուսուցիչը: Մյուսները կարծում են, որ սա գաղափար է, որն արժե փորձել, քանի որ այն արդյունավետ է տարածաշրջանի այլ մասերում: Ինչու՞ ոչ: Դպրոցի տնօրենը չեզոքություն է պահպանում: «Ես դեմ չեմ, որ դուք փորձեք դա, եթե կարողանաք համոզել մյուսներին»,- ասում է նա: Կարո՞ղ են նրանք մշակել ծրագիր, թե ինչպես վարվել:

## Իրավիճակ 3

Դպրոցում ազգային փոքրամասնությունների երեխաների հետ կապված խնդիր կա: Նրանք խոսում են միայն ազգակից երեխաների հետ, չեն շփվում կամ չեն աշխատում իրենց խմբից դուրս որևէ մեկի հետ: Մեծամասնություն կազմող աշակերտները նույնպես վրդովված են և չեն ուզում աշխատել փոքրամասնության ներկայացուցիչ սովորողների հետ: Ի՞նչ կարելի է անել: Շրջանի պաշտոնյան ասում է. «Թող նրանք աշխատեն իրենց խմբերում»: Բայց դպրոցի տնօրենը և ուսուցիչները կարծում են, որ դա չի համապատասխանում ներառականությանը: Ի՞նչպես վարվել: Ո՞րն է տնօրենի դերն այս գործընթացում:

## Իրավիճակ 4 (ՎՄՁ)

ՎՄՁ դասարանի երեխաների ծնողները բողոքում են, որ իրենց երեխաներն ավելի շատ գիտեն փոքրամասնությունների երգերն ու պատմությունները, քան իրենց մշակութային ժառանգություն հանդիսացող արժեքները: Դպրոցն այլ կարծիքի է: Ինչպե՞ս է դպրոցի անձնակազմը կարգավորելու այս հարցը համայնքի հետ:

**Նշումներ**

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե ինչ նոր գաղափարներ տվեց Ձեզ այս դասընթացը: Ի՞նչ խնդիրների առաջ կկանգնեք Դուք, եթե ցանկանան նոր բան փորձել Ձեր դպրոցում: Ու՞մ կողմից: Ինպե՞ս է հնարավոր շրջանցել դրանք:



**Հիմնական գաղափարներ**

- Համատեղ գործողությունների արդյունքում հնարավոր է ռիսկի գնալ և փորձարկել զարգացմանը նպաստող նոր, նույնիսկ անհարմար գաղափարներ:
- Համատեղ գործողությունների ներուժի նկատմամբ հավատը հասկացություն է, բայց նաև վերաբերմունք և պայման, որի համաձայն պետք է գործել: Դրա համար որոշակի համարձակություն կարող է պահանջվել, բայց դա հզոր գաղափար է, որն ազդում է աշակերտների առաջադիմության վրա:
- Ուսուցիչները, ովքեր միասին պատասխանատվություն են ստանձնում բոլոր աշակերտների համար, այլևս չեն զգում, որ առանձին են աշխատում: Սա իր հերթին նրանց հնարավորություն է տալիս սահմանել ավելի մեծ նպատակներ իրենց համար և ավելի մեծ ակնկալիքներ՝ աշակերտների համար, ովքեր էլ իրենց հերթին ավելի մեծ ձեռքբերումներ են ունենում:

# ԴԱՍ 5. ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԿԵՐՊԱՐԸ

Դասընթացի ընթացքում գրանցեք հնարավորինս շատ կարևոր գաղափարներ (օգտագործեք կետեր, հիմնական բառեր և գաղափարներ, դիագրամներ կամ գծապատկերներ):

Գրի առեք Ձեզ մոտ ծագած հարցերը: Սա կօգնի Ձեզ ավելի խորացնել գիտելիքները:

Գրի առեք այն բացահայտումները, որոնք կցանկանաք հետագայում կիրառել:

# ԴԱՍ 5. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.2. ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ



Խմբային աշխատանք

Ուսումնասիրելով տրված սցենարները՝ փորձեք վերլուծել դրանք դպրոցի տնօրենի տեսանկյունից և առաջարկել համապատասխան գործողություններ, որոնք հանգեցնելու են խնդրահարույց իրավիճակի լուծմանը:

## Սցենար 2

Վեց եզդի երեխաների ծնողները եկել են դպրոց: Նրանք իրենց երեխաներին դպրոց են ուղարկել, որովհետև պետության պահանջն է այդպիսին: Միայն հիմա են նրանք պարզում, որ իրենց երեխաները ոչինչ չեն սովորում, դժգոհ են ու ձանձրանում են դպրոցում: Նրանք եկել են ձեզ (դպրոցի տնօրենին) ասելու, որ որոշել են երեխաներին այլևս դպրոց չուղարկել: «Ուսուցիչներն անընդհատ դժգոհում են նրանցից տնային առաջադրանքները չկատարելու համար: Երեխաները չեն ընկալում դասերը, իսկ գրքերը ոչինչ չեն պատմում եզդի ժողովրդի մասին: Նրանց համար տանը մնալն ավելի օգտակար կլինի: Առնվազն կարող են սովորել որևէ բան անել և որոշակի բաներ իմանալ մեր ավանդական մշակույթից: Նրանք մի քանի ժամ աշխատում են և օգնում հոգալ ծախսերը: Ի՞նչ իմաստ ունի դպրոցը, եթե նրանք չեն սովորում»: Ծնողներն այժմ մտածում են երեխաներին դպրոցից հանելու մասին: Բայց դուք չեք ցանկանում, որ երեխաները թողնեն ուսումը:

Նշումներ

ա) Ծնողները եկել են քննարկելու իրենց երեխայի առաջադիմությունը (երեխան լավ չի սովորում):

բ) Ծնողները եկել են փոխելու երեխայի հոգեբանի հետ հանդիպման ժամը (նա խիստ զբաղված մարդ է և ժամի համար պայմանավորվում է նախօրոք, իսկ ծնողը հաստատել է հանդիպումը)։ Երեխան խորհրդատվություն է ստանում, որովհետև ագրեսիվ է և պետք է «ետ վարժվի» այդ վարքից։

գ) Ծնողները ցանկանում են խոսել իրենց այն կասկածների մասին, որ երեխային դպրոցում նեղացնում են, սակայն ամբողջ պատմությունը երեխայից չեն կարողացել իմանալ։ Երեխան չի ուզում որևէ բան ասել, որովհետև տեսել է, որ երբ ծնողները, ուսուցիչները միջամտում են, իրավիճակը խուլիգանների հետ ավելի է վատթարանում։

# ԴԱՍ 5. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.3. «ՆԵՐԱՌՈՂ ՏՆՕՐԵՆ» ԳԱՂԱՓԱՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Խմբային աշխատանք

Հաշվի առնելով գծապատկերում տրված և ուսումնասիրության ենթակա մեկնաբառը՝ գծապատկերի հաջորդ երկու վանդակներում, առանց քննարկման, գրանցեք մեկնաբառից ծնված և առաջինը հնչած երկու պատահական բառ (պետք է խրախուսել ենթագիտակցական ոլորտում ստեղծված համադրական կապերը): Համադրական կապերի վրա հիմնված աշխատանքը շարունակեք այնքան, մինչև լրացվի երեք շերտով բացված պրիզման: Այնուհետև պրիզման սկսում է փակվել և վանդակները լրացվում են նախորդ երկու բառերի համադրական կապի հիման վրա:
Պրիզմայի մեկնաբառի ու վերջնաբառի միջև պետք է գտնել տրամաբանական կապ, որը կարտացոլվի մեկ նախադասության կամ մտքի մեջ:



Նշումներ

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե ինչ նոր մոտեցումներ, վերաբերմունքի դրսևորումներ, ներառական կրթությանը հավատացող և դրա համար պայքարող տնօրենին բնորոշ առանձնահատկություններ սովորեցիք այս դասընթացից:



**Հիմնական գաղափարներ**

- Ներառական կրթության իրացման նպատակով անհրաժեշտ է շարունակական աշխատանքներ իրականացնել թե՛ դպրոցում, թե՛ դպրոցից դուրս՝ համայնքում:
- Գործին քաջատեղյակ, նվիրված տնօրենի ամենօրյա աշխատանքի, գրագետ մշակված ծրագրի և հավաքական ջանքերի շնորհիվ դպրոցը կարող է ավելին անել:
- Դպրոց-ծնող-համայնք առողջ կապը հաստատող և պահպանող գործոն կարող է լինել ներառականությանը կողմնակից տնօրենը, ով կարևորում է դպրոցի թիմային աշխատանքը և համայնքների հավաքական համագործակցությունը, ինչը կարող է ուժեղ խթան հաղորդել դպրոցում ներառականության գործընթացին:
- «Ներառող տնօրեն» հասկացության մասին խոսելիս անհրաժեշտ է հենց տնօրենին ներգրավել քննարկման մեջ:

**Նշումներ**

# ԴԱՍ 6. ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԲԱԶՄԱԶԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ ԿՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Դասընթացի ընթացքում գրանցեք հնարավորինս շատ կարևոր գաղափարներ (օգտագործեք կետեր, հիմնական բառեր և գաղափարներ, դիագրամներ կամ գծապատկերներ):

Գրի առեք Ձեզ մոտ ծագած հարցերը: Սա կօգնի Ձեզ ավելի խորացնել գիտելիքները:

Գրի առեք այն բացահայտումները, որոնք կցանկանաք հետագայում կիրառել:

## ԴԱՍ 6. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6.1. ԱՆՁՆԱԿԱՆ ԱՃԻ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ ՈՒՆԵՑՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ



**Խմբային աշխատանք**

Այս վարժությունը խթանում է պատասխանատվություն ստանձնել Ձեր մասնագիտական զարգացման համար, անընդհատ սովորել՝ զարգացնելով անձնական աճի մտածելակերպը: Դա թույլ է տալիս լինել ինքնավստահ, փորձարկել, սխալները դիտարկել ոչ թե որպես վախի աղբյուր, այլ որպես դասեր քաղելու հնարավորություն:

| **Ֆիքսված մտածելակերպ**<br>Բանականությունն ու տաղանդը ֆիքսված են: | **Աճի մտածելակերպ**<br>Խելքն ու տաղանդը կարող են բարելավվել |
|---|---|
| Թաքցնում է թերությունները, սխալները՝ ամաչում է ձախողումների համար, հեշտությամբ է հանձնվում: Չկա նպատակներին հասնելու դրդապատճառ: | Թերությունները և սխալները զարգացման հնարավորություններ են, անհաջողությունները՝ ուսուցման գործընթացի մաս: Առկա է նպատակներին հասնելու մոտիվացիա: |
| Հեշտ է հանձնվում և անհաջողությունները դիտարկում է որպես մշտական ձախողումներ: | Ձախողումը համարում է ժամանակավոր անհաջողություն և շարունակում է գնալ դեպի նպատակը: |
| Կարծիք հայտնելը և քննադատությունը համարում է իր անձի դեմ ուղղված գործողություն և անտեսում է կառուցողական քննադատությունը: | Կարծիք հայտնելը և քննադատությունը համարում է կառուցողական և օգտագործում այն որպես աճի հնարավորություն: |
| Հավատում է, որ տաղանդը բնածին է, իսկ ջանքերն ու աշխատանքը կարևոր չեն՝ «Կամ լավ եմ, կամ ոչ»: | Հավատում է, որ ջանքերն ու աշխատանքը կարող են նպաստել հմտությունների զարգացմանը՝ «Ես կարող եմ սովորել այն ամենը, ինչ ուզում եմ»: |
| Խուսափում է մարտահրավերներից ձախողման հավանականությունը կանխելու համար: | Պատրաստակամորեն ընդունում է մարտահրավերները և ռիսկի դիմում հնարավոր ձախողումը հաշվի առնելով: |
| Ուրիշների հաջողությունները համարում է սպառնալիք կամ նախանձի աղբյուր: | Ուրիշների հաջողությունը դիտարկում է որպես ներշնչման աղբյուր: |

**Նշումներ**

Օրագրում գրանցեք Ձեր մտքերն այն մասին, թե ինչ գրառումներ եք արել այնտեղ 1-ին դասի վերաբերյալ: Արդյո՞ք Ձեր մեկնաբանություններից որևէ մեկն արտացոլում է աճի մտածելակերպը:

Այժմ գրառում կատարեք անձնական աճի մտածելակերպի դրսևորման երկու վարքագծի մասին, որոնք կցանկանաք բարելավել հաջորդ կիսամյակում:



**Հիմնական գաղափարներ**

- Անձնական աճի մտածելակերպը համոզմունք է առ այն, որ բանականությունն ու տաղանդը անփոփոխ չեն, այլ կարող են բարելավվել շարունակական ջանքերի և կիրառության շնորհիվ:
- Անձնական աճի մտածելակերպ ունեցող մանկավարժը պատրաստ է պատասխանատվություն ստանձնել սեփական մասնագիտական զարգացման համար:
- Ուսուցչի մտածելակերպն ու ակնկալիքները հզոր ազդեցություն են ունենում նրա վրա, թե ինչպես են աշակերտները տեսնում իրենց՝ որպես սովորողների, ինչպես նաև հաջողության և ձախողման վերաբերյալ նրանց ընկալման վրա:
- Անձնական աճի մտածելակերպ ունեցող ուսուցիչները ողջունում են արձագանքները և հասկանում իրենց աշակերտներին արձագանքելու հնարավորություն տալու, նրանց ջանքերն ու առաջընթացը գովաբանելու, այլ ոչ նրանց հաջողությունը սահմանված ցուցանիշների հետ համեմատելու արդյունավետությունը:
- Աշակերտները կարդարացնեն մեծ սպասելիքները, եթե նրանց աջակցեն, և նրանք չվախենան դասարանում սխալներից դասեր քաղելու և ռիսկի դիմելու հարցում:

# ԴԱՍ 6. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6.2. ՆՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ. ԳՆԱՀԱՏԵԼ ԵՎ ՀԱՐԳԵԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Հաշվի առնելով մշակույթային իրազեկվածության վերաբերյալ նախորդ դասերի ժամանակ ստացած գիտելիքները՝ քննարկեք դեպքերը և դրանց լուծման համար առաջարկված ռազմավարությունները: Ներկայացրեք՝ կա արդյո՞ք այդ ռազմավարությունները բարելավելու կամ ճշգրտելու կարիք:

## Նոր երեխաներ դասարանում

### Մաս 1

Տարրական դասարանում դպրոցն ունենալու է երեք նոր աշակերտ՝ երկու եզդի երեխա և լսողության խնդիրներ ունեցող մեկ երեխա:
Դպրոցի տնօրենը նախապատրաստել է իր դպրոցը և ուսուցիչներին. ուսուցչական կազմի հետ անցկացրել է դասընթացներ, թե ինչպես աշխատել հաշմանդամություն ունեցող երեխաների հետ, հարգել եզդի երեխաների մշակութային առանձնահատկությունները: Դպրոցի բոլոր ցուցանակները համալրվել են եզդիերեն գրառումներով:

Տնօրենը խնդրել է ուսուցիչներին.

1. Փորձել աշխատել միասին և օգտագործել միմյանց գաղափարները՝ դասարանական աշխատանքների կազմակերպման և դասարանը պատրաստելու համար:
2. Ցանկացած խնդրի դեպքում խորհրդակցել իր հետ և դրանք քննարկել ուսուցչանոցում:

Մարիամն անհանգիստ է: Եզդի երեխաներից մեկը՝ Մարթան, ինչպես նաև Էրիկը, ով լսողության խանգարում ունի, սովորում են իր դասարանում: Ուսուցչուհին չգիտի, թե ինչպես կկարողանա հաղթահարել խնդիրները: Արդյո՞ք ճիշտ չէ, որ Էրիկը հատուկ դպրոցում սովորի: Բայց տնօրենն ասում է, որ տղան հաջողությամբ հաղթահարել է դժվարությունները նախկին դպրոցում: Ուսուցչուհուն հետաքրքիր է, թե ինչպես: Նա նաև Մարթայի համար է անհանգստանում: Ի՞նչ կլինի, եթե մյուս երեխաները չցանկանան շփվել աղջկա հետ կամ նեղացնեն նրան: Ինչպե՞ս վարվել այդ դեպքում: Իսկ մյուս երեխաների ծնողնե՞րը: Իսկ եթե նրանք թույլ չտան, որ իրենց երեխաները դասարանում նստեն այդ նոր երեխաների կողքի՞ն:

Մարիամը հոգոց հանեց: Դպրոցում կար միայն մեկ եզդի երեխա՝ Օքսանան, ով սովորում էր միջին դասարանում: Սակայն այս նորեկ եզդի երեխաները նախկինում հանրակրթական դպրոց չեն հաճախել: Ի՞նչ է անելու ուսուցչուհին: Որտեղի՞ց է սկսելու: «Ուսումնական այս ծրագրում մենք ընդհանրապես չունենք

եզդիերեն պատմվածքներ», մտածեց նա: «Հավանաբար կխնդրեմ երկու եզդի աղջիկներին իրենց հետ ինչ-որ պատմվածքներ բերել տանից: Այ դա լավ կլինի»:

Տնօրենը մեկ այլ լավ գաղափար առաջարկեց ուսուցչուհուն: «Խնդրեք Օքսանային ուղեկցել երկու եզդի երեխաներին և ծանոթացնել դպրոցին: Երեխաները բավականաչափ լավ կզգան նրա կողքին: Խնդրեք աղջկան նաև պարզել, թե ինչ անհանգստություն և մտահոգություն ունեն նորեկները»: «Փառք Աստծո, որ մենք այսպիսի հոգատար տնօրեն ունենք»,- մտածեց Մարիամը: «Ես անհարմար եմ զգում, բայց նաև գիտեմ, որ մենք պետք է ունենանք տարբեր երեխաներ մեր դասարանում: Մեր երեխաները կմեծանան և կյանք կմտնեն: Նրանք պետք է իմանան, թե ինչպես աշխատել տարբեր մշակութային խմբերի պատկանող մարդկանց հետ, սովորել նրանցից և լավ ժամանակ անցկացնել վերջիններիս հետ մեր այս գլոբալացված աշխարհում: Որոշ վայրերում հենց իրենք կարող են փոքրամասնություն ներկայացնել»:

Ուսուցչուհին նայեց նոթատետրին և որոշեց սկսել պլանավորումը:

Մի քանի շաբաթ անց Մարիամը ուժասպառ էր եղել: Նա անհրաժեշտ էր համարում զրուցել նորեկների մասին իր դասարանի հետ մինչև նրանց գալը: Նա լավ դաս էր պատրաստել այն մասին, թե ինչպես են որոշ երեխաներ այլ կերպ հաղորդակցվում, բայց միևնույն է՝ շատ խելացի են: Ուսուցչուհին նրանց պատմեց Հելեն Քելերի պատմությունը և այն մասին, թե ինչպես ոչ բոլորն են խոսում միևնույն լեզվով, բայց բոլորը սովորում են, բոլորը հաջողության են հասնում: Իր կարծիքով՝ ինքն ամեն ինչ ճիշտ արեց: Բայց մի քանի օր հետո նկատեց մյուս աշակերտների խոժոռ դեմքերը, երբ նրանց խնդրեց նստել նորեկներից մեկի կողքին: Իսկ Մարթայի ծնողը զանգահարել էր և ասել, որ երեխային դպրոցում նեղացնում են: «Դպրոցում ունենք բուլինգի դեմ պայքարի քաղաքականություն,- մտածեց Մարիամը,- երեխաները գիտեն այդ մասին, ուրեմն ի՞նչ է տեղի ունենում»: Նա որոշեց խոսել տնօրենի հետ և օգնություն խնդրել:

Ուսուցչուհին պարզեց, որ Մարթան երբեք իր տնային աշխատանքը չի կատարում: Առաջադրանքները դժվար չէին, բայց Մարթան ոչ մի կերպ չէր կատարում դրանք: Ի՞նչ է անելու ինքը: Մարթան շատ չէր խոսում և հարցերին չէր պատասխանում, միայն լուռ իրեն էր նայում: Մարիամը ստիպված էր մեկ ուրիշին խնդրել պատասխանել հարցին, և երբեմն լսում էր, թե ինչպես են մյուս երեխաները զսպում ծիծաղը:

Նա փորձեց Մարթային հանձնարարել ավանդական պատմություններ պատրաստել տան և ընտանիքի մասին, բայց աղջիկը ոչինչ չարեց:

Երբ ուսուցչուհին տնօրենի հետ խոսեց աշակերտներին նեղացնելու մասին, վերջինս աջակցելու պատրաստակամություն հայտնեց: «Դա ինձ թողեք: Կխոսենք դրա մասին»: Մարիամը հոգոց հանեց: «Իսկ մինչ այդ ի՞նչ է լինելու»,- մտածեց նա: Հետո գնաց գրադարան: «Հետաքրքիր է, այս մասին

որևէ գիրք կլինի՞»,- մտածեց նա: «Փորձեք համացանցում գտնել,- ասաց գրադարանավարուհին:- Ուսուցիչների մի ամբողջ խումբ կա, որոնք խոսում են ամենատարբեր բաների մասին: Նրանց հարցրեք»: Մարիամն այդպես էլ վարվեց: Տարբեր փորձառություն ունեցող ուսուցիչները նրան շատ օգնեցին իրենց խորհուրդներով: Իսկ հետո եկավ դպրոցի տնօրենը և ասաց, որ լավ միտք ունի: Նա ուսուցիչների հետ զրուցեց ուսուցչանոցում: «Ուզում եմ՝ վերանայենք բուլինգի դեմ պայքարի մեր միջոցները, բայց այս անգամ ուզում եմ, որ երեխաները մասնակցեն դրան: Եթե այդ միջոցառումները նրանց համար են, ապա թող նրանք էլ ապահովեն, որ դրանք բոլորի համար ընդունելի լինեն: Խնդրենք ամբողջ դպրոցին, այդ թվում՝ աշակերտական խորհրդին, մտածել այս մասին: Ես այդ մասին կհայտարարեմ ժողովի ժամանակ և միջանցքում կտեղադրեմ առաջարկությունների տուփ, որի մեջ բոլորը կարող են գցել իրենց գաղափարներն ու առաջարկությունները պարունակող գրառումներով թերթիկներ: Կարո՞ղ եք այդ մասին խոսել ձեր դասարաններում: Այդ կերպ բուլինգի մասին ուղերձը կհասնի բոլորին՝ առանց ուշադրությունը կենտրոնացնելու Մարիամի դասարանի վրա»:

Մարիամը թեթևացած զգաց: Դեռ շատ բան կար կարգավորելու՝ դասավանդում, տնային աշխատանք, բայց զգում էր, որ այժմ ճիշտ ուղու վրա է:

**Մաս 2. Սա կօգնի մասնակիցներին մտածել դասի իրենց սեփական մեթոդների մասին՝ պարզելու, թե որքանով են դրանք ներառական: Նրանք պետք է հաշվի առնեն հետևյալը.**

- Դասարանի կազմակերպվածությունը (օրինակ՝ աշակերտների փոխհարաբերությունների և փոխադարձ հարգանքի հիմնական կանոնները, աշակերտների աշխատանքների ցուցադրումը, խմբային աշխատանքի, համատեղ նախագծային աշխատանքի պլանավորումը, ընկերական օգնության համակարգի ստեղծումը, հասակակիցներից և հասակակիցների հետ սովորելը, ինչպես նաև հասակակիցների կարծիքը):
- Երեխաներին ճանաչելու անհրաժեշտությունը (օրինակ՝ մշակութային պատկանելությունը, կարիքները, ուժեղ կողմերը, ձեռք բերած գիտելիքները, նախասիրություններն ուսման մեջ):
- Ուսուցչի պահվածքը դասարանում աշակերտներին օրինակ ծառայելու համար (օր.՝ գնահատումը, հարգանքը, բոլոր երեխաների պատասխանատվության գիտակցումը, նրանց ձայնի և ընտրության հնարավորություն տալը, չգիտակցված նախապաշարմունքներին ուշադրություն դարձնելը երեխաների ներգրավվածության, գնահատման, ընդունման հարցերում):
- Վարքի առումով սպասելիքների սահմանումը ամբողջ դասարանի համար:
- Գործող ուսումնական ծրագիրն ավելի բազմազան դարձնելը. գաղափարի համադրական սխեմայի միջոցով ծրագիրը մատչելի դարձնել տարբեր մշակույթներ կրող անձանց համար:

- Ուսման սպասելիքների սահմանումը երեխաների համար (ավելի հանգամանորեն անդրադարձ է արվել 5.3 վարժության մեջ):

Կազմեք Ձեր լեզուների ուսումնական ծրագրի համադրական սխեման և լրացրեք բովանդակությունը՝ ծրագիրն ընդլայնելու և առավել ներառական դարձնելու համար:

Օրագրում գրառեք Ձեր մտքերը հետևյալ պնդումների մասին՝ «Մենք չգիտենք, թե որտեղ գտնել նյութը», «Ուսումնական պլանն արդեն ծանրաբեռնված է, բովանդակությունը լրացնելու համար ժամանակ չունենք», «Մենք կենտրոնանում ենք քննություններին նախապատրաստվելու վրա: Ինչպե՞ս դա կօգնի», «Նրանք դեռ փոքր են: Նրանք պետք է սովորեն մեր լեզուն և մեր ուսուցման մեթոդներին, այլապես չեն կարող առաջ գնալ»:




- Ուսուցիչներն ունեն բոլոր հնարավորությունները իրենց դասերը ներառական դարձնելու համար. նրանք ունեն հմտություններ, զգայունություն և կամք՝ ապահովելու, որ բոլոր երեխաները սովորեն:
- Մշակութային իրազեկություն նշանակում է ապահովել, որ յուրաքանչյուր երեխա ներկայացված լինի և ուշադրության արժանանա դասարանում ըստ ուսուցչի դասավանդման մեթոդի և դասի բովանդակության:
- Դասարանում բազմազանության առկայության դեպքում ճշգրիտ պլանավորումն օգնում է աշակերտներին իրենց ապահով և գնահատված զգալ:

## ԴԱՍ 6. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6.3. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՁԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՁԱՅՆԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐՆ ՈՒ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Քննարկումներ**

Քննարկեք ստորև ներկայացված հարցերը և փորձեք կռահել, թե ինչ նկատի ունի.

- Դու լսո՞ւմ ես ինձ:
- Տեսնո՞ւմ ես ինձ:
- Արդարացի կվարվե՞ս ինձ հետ:
- Դու կպաշտպանե՞ս ինձ:



**Ակտիվ հղումներ**

Լրացուցիչ տեղեկատվություն.

**«Ներառականությունը դասարանում. աշակերտների բարձրաձայնած կարծիքներն ու մտահոգությունները»**

**Նշումներ**

Օրագրում գրառեք այն մտքերն ու գաղափարները, որոնց վրա ցանկանում եք կենտրոնանալ այս դասընթացից հետո:



**Հիմնական գաղափարներ**

- Աշակերտների «տնային կյանքը» դպրոցի հետ կապելը և բազմազանության մոդելավորումը դասարանում մշակույթների փոխանակման խթանման միջոցով նպաստում է բազմազանության արժևորմանը և աջակցում բոլոր սովորողներին:
- Աշակերտները դասարան են մտնում՝ իրենց հետ բերելով իրենց անցյալը, տնային կյանքը, հույզերը և գիտակցությունը, որոնք կարող են օգնել նրանց ապահով զգալ, լսելի և տեսանելի դառնալ, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս նրանց զարգանալ և հաջողությունների հասնել:
- Ուսուցիչների համագործակցությունը, ինչպես նաև միմյանցից և միասին սովորելն իսկապես օգնում և հնարավորություն է տալիս նրանց հոգալ իրենց՝ որպես ներառական կրթություն իրականացնող ուսուցիչների, մասնագիտական աճի մասին:

# ԴԱՍ 6. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6.4. ԾՆՈՂՆԵՐԻ և ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## Ընտանիքներին ներգրավելու մեթոդներ

Ի՞նչ միջոցներ կարող են ձեռնարկել դպրոցները ծնողների ներգրավվածությունը մեծացնելու համար:

## Աշխատակազմի վերապատրաստում

Ծնողական ժողովների, տնային այցերի, հեռախոսազանգերի և ծնողների հետ շփման այլ ձևերի ժամանակ դրական վարքագիծ դրսևորելու նպատակով վերապատրաստումը կխթանի մասնակցայնությունը: Շփումն ու համագործակցությունը կարող են կայանալ, եթե մանկավարժն ուշադիր է և հաշվի է առնում ծնողի էթնիկական, մշակութային պատկանելությունը, սոցիալ-տնտեսական ծագումը: Ծնողները պետք իմանան, որ իրենց ներգրավվածությունը նպաստում է երեխայի առաջադիմության բարձրացմանը, և որ մասնակցության համար կրթական պահանջներ չկան:

Լսելով ծնողների մտահոգություններն իրենց երեխայի կրթության մասին կամ նրանց մտքերն ու գաղափարները դպրոցը բարելավելու միջոցների վերաբերյալ՝ ցույց եք տալիս հոգածություն և շահագրգռություն: Ծնողները կարձագանքեն դրան, եթե զգան, որ իրենց ներկայությունը ցանկալի է, իրենք օգտակար ու հարգված են:

## Հաղորդակցում

Ընտանիքներին տեղեկացրեք դպրոցական ծրագրերի և աշակերտի առաջադիմության մասին: Ստեղծեք երկկողմանի հաղորդակցության ուղիներ դպրոցի և ընտանիքի միջև: Տրամադրեք ծնողների համար նախատեսված ուղեցույց, որը պարունակում է հստակ, գործնական տեղեկատվություն, ներառյալ՝ դպրոցում ծնողների մասնակցության կանոնները, ընթացակարգերն ու հատուկ եղանակները: Եթե շատ ծնողներ անգլերենից բացի խոսում են նաև այլ լեզվով, ապա տպեք ձեռնարկը երկու լեզվով: Ծանուցումներն ու տեղեկագրերը ծնողներին տեղեկացված պահելու կարևոր միջոց են, այդուհանդերձ, հեռախոսազանգերը, անհատական հանդիպումներն ու տնային այցերը կմեծացնեն աջակցությունը:

## Ժամանակը և գտնվելու վայրը

Ծնողների ներգրավումը պլանավորելիս պետք է հաշվի առնել դպրոցի սպասարկման տարածքը: Հանդիպումների և միջոցառումների ժամի և վայրի հարցում ճկունությունը կմեծացնի բոլոր ծնողների մասնակցայնությունը առնվազն անհրաժեշտության դեպքում: Աշխատեք հանդիպումները

կազմակերպել համայնքային կենտրոններում, բազմաբնակարան շենքերում կամ ընտանիքների բնակության վայրերի հարևանությամբ գտնվող այլ տարածքներում: Փորձեք հատուկ միջոցառումները պլանավորել այնպես, որ դրանք չխանգարեն դպրոցական կամ համայնքային մյուս միջոցառումներին:

## Ծնողական ժողովներ

Ծնողական ժողովները պլանավորելիս անհրաժեշտության կամ նպատակահարմարության դեպքում առաջարկեք թարգմանչի օգնություն, հարցրեք՝ կարո՞ղ են խնդրել համայնքում վստահություն վայելող որևէ մարդու կամ ընկերոջ՝ հանդես գալ որպես թարգմանիչ: Մի մոռացեք սկսել երեխայի մասին դրական, ոգևորիչ խոսքերով (տես՝ “Guidelines for Educator-Parent Conferences Concerning Angry Children-Leah Davies M Ed”): Ժողովի ավարտին ծնողներին խնդրեք լրացնել հարցաթերթիկ իրենց զբաղմունքի, նախասիրությունների, ձիրքի, հետաքրքրությունների և աշխատանքային գրաֆիկի մասին, ինչը կօգնի ձեզ հետագա պլանավորման գործում: Հատկացրեք նոթատետր կամ անկյուն, որտեղ ծնողները կարող են գրառումներ կատարել իրենց մտահոգությունների և/կամ հատուկ կարիքների մասին: Եթե ծնողի համար դժվար է լրացնել հարցաթերթիկը, ապա պետք է հարցազրույց անցկացնել: Հավաքեք լրացրած հարցաթերթիկները և հնարավորության դեպքում փարատեք նրանց մտահոգությունները մինչև նրանց հեռանալը:

## Երեխաների խնամք և տեղափոխում

Հնարավորության դեպքում ապահովեք երեխաների խնամքն ու տեղափոխումը, որպեսզի ծնողների մեծ մասը կարողանա մասնակցել տարբեր ժողովներին, հանդիպումներին և միջոցառումներին:

## Կամավորներ

Ծնողներին հրավիրեք արտադասարանական միջոցառումներին, օրինակ՝ երեխաների զբաղմունքի, նախասիրությունների կամ ձիրքի մասին քննարկումներին: Նրանք կարող են ներկայացնել նաև նկարչության, երաժշտության կամ մշակութային իրազեկման ծրագիր: Խնդրեք նրանց հանդես գալ որպես ուսուցչի օգնական կամ աջակցել դասերի պատրաստմանը, ուղեկցել էքսկուրսիաների ժամանակ կամ կատարել որոշ առօրյա վարչական աշխատանքներ, ինչպես օրինակ՝ հեռախոսազանգերին պատասխանելը, գրադարանում օգնելը կամ մյուս ծնողներին տեղեկացնելը: Մշակութային իրազեկությունն օգտագործելով՝ կամավորը միանում է երեխաների ինտերակտիվ խմբին դասարանում և գիտի, թե ինչպես վարվել խմբի տարբեր երեխաների հետ, ինչպես խթանել նրանց մասնակցությունը գիտելիքների զարգացման գործում:

## Ծնողների համար նախատեսված սենյակ և ուսումնամեթոդական կենտրոն

Յուրաքանչյուր դպրոցում ստեղծեք հարմարավետ վայր, որտեղ ծնողները հանգիստ կարող են գալ դասապատրաստման կրտսեր դպրոցական տարիքի

երեխաների հետ, կամ ուրիշ ծնողների հետ դպրոցական նախագծերի վրա աշխատելու համար: Այս սենյակների աշխատողները հաճախ լինում են ծնողների շահերի պաշտպաններ, ովքեր ընտանիքները կապում են դպրոցների և այնպիսի համայնքային ծառայությունների ու հաստատությունների հետ, ինչպիսիք են բժշկական օգնությունը, երեխաների խնամքը, աշխատանքի համար վերապատրաստումը, հոգեկան առողջության հիմնարկները, ապաստարանները, ծնողավարման դասընթացները, գրագիտության ծրագրերը, գրադարանները, անգլերեն լեզվի դասընթացները, շտապ օգնությունը, սննդի կտրոնների, հագուստեղենի կամ դպրոցական պարագաների ապահովումը և այլն:

## Համագործակցություն համայնքի հետ

Դպրոցական հարմարությունները համատեղ օգտագործեք այլ կազմակերպությունների հետ, ինչպիսիք են բնապահպանական, լեզվի և համակարգչային հմտությունների բարելավման ուղղությամբ աշխատող ընկերությունները, երեխաների համար արտադպրոցական ծրագրեր, ինչպես նաև մեծահասակների համար համակարգչային, լեզվի և այլ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու նպատակով: Կարելի է առաջարկել ընտանեկան հանգստի հնարավորություն երեկոյան կամ շաբաթ-կիրակի օրերին: Համակարգեք ռեսուրսները և ծառայությունները ընտանիքների, աշակերտների, իսկ դպրոցը՝ համայնքային խմբերի համար, այդ թվում՝ ընկերությունները, կազմակերպությունները, մշակութային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, քոլեջները, համալսարանները: Բոլորին հնարավորություն տվեք ծառայություն մատուցելու համայնքին:

## Ծնողների վերապատրաստում

Օգնեք ընտանիքներին ծնողների կարողությունները զարգացնելու, ընտանիքներին աջակցելու, երեխաների և դեռահասների զարգացման առանձնահատկությունները հասկանալու և բոլոր տարիքի սովորողների ուսմանն աջակցելու նպատակով տանը պայմաններ ստեղծելու հարցերում: Օժանդակեք ծնողական հմտությունները զարգացնելու համար աշխատաժողովներ կազմակերպելուն: Ապահովեք երեխաների խնամքը, սնունդը կամ խրախուսական այլ միջոցներ: Ընդգծեք դրական վարքագծեր ձևավորելու և տանը երեխաների ուսմանն աջակցելու մեթոդների կարևորությունը: Բացի դրանից, ծնողներից հավաքագրեք որպես առաջնորդների՝ ժողովներին ու վերապատրաստմանը մասնակցելու նպատակով:

## Որոշումների կայացում

Խթանեք ծնողների ներգրավվածությունը խորհրդատվական խորհուրդներում կամ հանձնաժողովներում, որոնք միասին պլանավորում և որոշումներ են կայացնում դպրոցի սկզբունքային մոտեցումների, կառավարման և շահերի պաշտպանության միջոցառումների մասին դպրոցական խորհուրդների կամ կատարելագործման թիմերի, կոմիտեների և ծնողական կազմակերպությունների միջոցով:

## Տանը սովորելը

Ընտանիքներին իրենց երեխաների հետ ներգրավեք ուսումնական գործընթացներում տանը, այդ թվում՝ տնային աշխատանք, նպատակների սահմանում և ուսումնական ծրագրի հետ կապված այլ աշխատանքներ իրականացնելու համար:

Խորհուրդ տվեք ուսուցիչներին կազմել տնային աշխատանքներ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին միասին կատարել և քննարկել հետաքրքիր առաջադրանքներ:



**Ակտիվ հղումներ**

Լրացուցիչ տեղեկատվություն.

**«Համագործակցություն ընտանիքների և համայնքների հետ»**

Աղբյուր՝ Ջ.Էփստայն և Ք.Սալինասի «Համագործակցություն ընտանիքների և համայնքների հետ», Educational Leadership 61, 8 (մայիս 2004), էջ 13

Լրացուցիչ տեղեկատվություն.

**«Բարձրացնել ծնողների ներգրավվածությունը դպրոցում»**

Աղբյուր՝ Լ. Դեյվիս, «Բարձրացնել ծնողների ներգրավվածությունը դպրոցում»

# ԴԱՍ 6. ՏԵՍԱՆՅՈՒԹԻ ԴԻՏՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**Խմբային աշխատանք**

Ձեզ ներկայացված տեսանյութը դիտելիս դիտարկեք հետևյալ հարցերը.

- Ո՞վ է նախաձեռնում շփումը: Ինչու՞:
- Ո՞վ է գաղափարներ և մեթոդներ առաջարկում տեսանյութում:
- Ինչպիսի՞ն է շփումը (օգտագործվող լեզուն, ներառյալ մարմնի լեզուն և լսելը):
- Ի՞նչ խոչընդոտներ (եթե այդպիսիք կան) պետք է հաղթահարել զրույցի ընթացքում:
- Ինչպե՞ս են նրանք աշխատում երեխայի ներուժն առավելագույնս օգտագործելու և ցանկացած խնդիր լուծելու կամ անհանգստությունը փարատելու համար:

**Նշումներ**

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե ինչ պետք է անեին նրանք նման հարաբերություններ հաստատելու համար: Արդյո՞ք մասնակիցները համաձայն են, որ դա ծնողական իրավունք է: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:



**Հիմնական գաղափարներ**

- Ուսուցիչներն ու ծնողները բնական գործընկերներ են երեխայի ուսումնառության հարցում, բայց դա միշտ չէ, որ ակնհայտ է երկու կողմերի դեպքում էլ: Ծնողները հաճախ ցանկանում են մասնակցել իրենց երեխայի ուսումնառությանը, սակայն կարող են տեսանելի և անտեսանելի խոչընդոտների հանդիպել դպրոցի հետ փոխգործակցելու համար:
- Ներառական կրթություն իրականացնող ուսուցիչները պետք է տեղյակ լինեն նրա վրա ազդող մշակութային նշանակության գործոնների մասին, ինչպիսիք են սեռը, մշակույթը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ընտանիքների ներգրավվածությունը և մասնակցությունը երեխաների կրթության գործընթացին:
- Երեխաների կրթության վերաբերյալ որոշում կայացնելիս անհրաժեշտ է ստեղծել և զարգացնել գործընկերային հարաբերություններ ընտանիքների հետ լիազորությունների բաշխման միջոցով:
- Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներն իրենց սպասելիքներում առերեսվում են տարբեր իրողությունների, և ուսուցիչները կարող են օգնել վստահություն ձևավորել ազնվության ու կարողությունների շնորհիվ:
- Ծնողները կարող են մեծ ներդրում ունենալ իրենց երեխայի ուսուցման մեթոդիկան և ոճը հասկանալու առումով, ինչը թույլ կտա օգնել ուսուցչին՝ որպես մանկավարժի:
- Ծնողները/մեծերը կարող են համալսարանական գիտելիքներ չունենալ, բայց նրանք կարող են օգնել դասարանին, որտեղ անհատական ուշադրություն է պահանջվում՝ թուլացնելով լարվածությունը, խորացնելով աշակերտների ներգրավվածությունը և փոխշփումները:
- Երեխաների առաջադիմությունը բարձրանում է, եթե նրանց ծնողներն ու դպրոցը համագործակցում են և ներդաշնակ աշխատում:



**Ակտիվ հղումներ**

Հիմնական և լրացուցիչ տեսանյութեր

# ԴԱՍ 7. ԴԵՊԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ԻՐԱՁԵԿ ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Դասընթացի ընթացքում գրանցեք հնարավորինս շատ կարևոր գաղափարներ (օգտագործեք կետեր, հիմնական բառեր և գաղափարներ, դիագրամներ կամ գծապատկերներ):

Գրի առեք Ձեզ մոտ ծագած հարցերը: Սա կօգնի Ձեզ ավելի խորացնել գիտելիքները:

Գրի առեք այն բացահայտումները, որոնք կցանկանաք հետագայում կիրառել:

## ԴԱՍ 7. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ. ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԱՐԴԱՐԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

**Նշումներ**

Օրագրում գրառեք Ձեր մտքերն այն մասին, թե դպրոցական կյանքի որ ոլորտներում կարող եք ներգրավել ծնողներին և համայնքներին: Արդյո՞ք դա համարում եք փոխկապակցված հարաբերություններ: Կարո՞ղ է արդյոք համայնքը լինել ազդեցության և աջակցության աղբյուր իրենց աշխատավայրերում: Ինչպե՞ս: Կարո՞ղ են նրանք իրենց հերթին աջակցել համայնքին: Ինչպե՞ս:



**Ակտիվ հղումներ**

Լրացուցիչ տեղեկատվություն.

**«Մարդակենտրոն նախագծման մոտեցման հինգ հիմնական փուլերը»**

Աղբյուր՝ Ջ.Էփստայն և Ք.Սալինասի «Համագործակցություն ընտանիքների և համայնքների հետ», Educational Leadership 61, 8 (մայիս 2004), էջ 13



**Խմբային աշխատանք**

Դիտարկեք ստորև ներկայացված սցենարները: Կիրառելով մարդակենտրոն նախագծման մոտեցումը, որը նպատակաուղղված է բոլորի համար ընդունելի լուծումներ գտնելուն, մտածեք, թե ինչպես կարելի է մոտենալ այս խնդիրներին: Հիշեք հինգ քայլերը.

- Ուշադիր լսեք ապրումակցելով և պարզեք, թե ինչ է մտածում, անում և զգում համայնքը տվյալ խնդրի վերաբերյալ: Մտածեք, թե դուք ինչպես կվարվեիք այդ պարագայում: Ու՞մ կիրավիրեիք ֆոկուս խմբի քննարկումներին: Ի՞նչ հարցեր կտայիք:
- Հավաքեք տեղեկություններ և գտեք թեմաներ, որոնցում ներառված են համայնքի՝ տվյալ խնդրից տուժած ներկայացուցիչների բերած «տվյալները»:
- Հավաքեք բոլոր շահագրգիռ կողմերին, ներառյալ համայնքը, կրթության պատասխանատուները, աշակերտական խորհրդի անդամները և այլք, և միասին աշխատեք: Մտածեք հավանական լուծումներ, առաջարկեք ստեղծագործական գաղափարներ, ուսումնասիրեք բոլոր հնարավորությունները և ապա միասին ծրագրեք լուծումը:
- Նախագծեք և իրականացրեք ծրագրի փորձնական տարբերակը: Խնդրեք ծառայության գլխավոր շահառուներին ներկայացնել դիտողություններ և առաջարկություններ: Ի՞նչն է պակասում: Ի՞նչն է անտեսվել: Արդյո՞ք ծրագիրը շարունակական է լինելու:
- Անհրաժեշտության դեպքում կատարեք փոփոխություններ և իրականացրեք ծրագիրը: Երբեմն փոփոխություններ կատարվում են մի քանի անգամ՝ ծրագիրը համալրելով նոր տեղեկություններով:

### Իրավիճակ 1

Դպրոցը մտահոգված է այն հարցով, թե փոքրամասնությունների խմբից քանի երեխա է ընդունվելու 1-ին դասարան (ովքեր մինչ այդ չեն հաճախել մանկապարտեզ), և ցանկանում է աշխատել փոքրամասնությունների համայնքի հետ՝ միջոցներ գտնելու նրանց և մանկապարտեզ հաճախած մյուս երեխաների միջև տարբերությունները վերացնելու համար: Խնդիրն այն է, որ համայնքը համոզված է. իրենց երեխաներին ավելի լավ են խնամում տատիկները և պապիկները, ովքեր կարող են ավելի լավ հոգ տանել նրանց մասին, սովորեցնել նրանց իրենց մայրենի լեզուն և մշակույթը, քան իրենց համար մի փոքր խորթ դպրոցական աշխարհում:

### Իրավիճակ 2

Դպրոցում եզդի (գյուղական բնակավայրերի երեխաներ) և հաշմանդամություն ունեցող երեխաների առաջադիմության կայուն անկում է գրանցվել: Միևնույն

ժամանակ, արձանագրվել է ուսումը թողնելու դեպքերի աճ հատկապես եզդիների, մասնավորապես՝ աղջիկների շրջանում: Եթե նրանք թողնեն դպրոցը, ապա չեն կարող մասնակցել նույնիսկ միջին մասնագիտական կրթության ծրագրերին, քանի որ չունեն ընդունելության համար անհրաժեշտ նվազագույն հմտություններ և գիտելիքներ: Պարզ չէ, թե արդյո՞ք եզդի աղջիկները կօգտվեն առաջարկվող միջին մասնագիտական կրթության ծրագրերից: Դպրոցը որևէ տվյալ չունի, թե ինչ է կատարվում ուսումը թողած աշակերտների հետ:

Համայնքը բողոքում է, որ փողոցներում թափառող երիտասարդների թիվը գնալով ավելանում է, որովհետև նրանք որևէ մասնագիտական որակավորում չունեն և չեն կարող աշխատանք ստանալ: Երիտասարդ «պարապ ուղեղները չարիք են գործում»: Ավելացել են գողությունների, բռնությունների դեպքերը: Թե՛ դպրոցը, և թե՛ համայնքը կարծում են, որ պետք է առավելագույնն անեն, որ երեխաները մնան դպրոցում և կրթություն ստանան:

### Իրավիճակ 3

Դպրոցի տնօրենը կանգնած է երկընտրանքի առաջ: Դպրոցը գտնվում է աղքատ թաղամասում, և դպրոցի առաջադիմության ցուցանիշներն այնքան էլ բարձր չեն: Արդյունքում կարող է դպրոցը փակվել, իսկ երեխաներին կբաշխեն այլ դպրոցներում: «Բայց մենք դպրոցական համայնք ենք»,- մտածում է նա: Նա հասկանում է, որ առանց դպրոցի ավելի շատ երեխաներ կհայտնվեն փողոցներում, համայնքն ավելի քիչ հնարավորություն կունենա միջամտելու բռնությունների, հանցագործությունների և աղքատության՝ գոյություն ունեցող արատավոր շրջանի վերացմանը: Ուսուցիչները լավն են, բայց տնօրենը գիտի, որ նրանք անհանգիստ են, ծանրաբեռնված և ուժասպառ: Տնօրենը որոշում է հանդիպում կազմակերպել դպրոցական խորհրդի, ուսուցիչների և համայնքի հետ հետագա հնարավոր քայլերը պարզելու համար:

Օրագրում գրառեք Ձեր գործողություններն այն մասին, թե ինչ կարող եք անել Ձեր դպրոցում՝ ներառական կրթությանն աջակցելու նպատակով (օրինակ՝ 1. ուսումնական պլանի վերանայում և նորի ընդունում, 2.համայնքների հետ կանոնավոր հանդիպումների իրականացում և այլն):

**Իրավիճակ ____**

## Գործողությունների ծրագիր




- Դպրոցներն ու համայնքները փոխկապակցված հարաբերություններ ունեն: Համայնքները կարող են ներդնել արժեքավոր ռեսուրսներ, իսկ դպրոցները՝ ապահովել հաջող, որակյալ կրթություն:
- Դպրոցները կարող են լիազորությունները կիսել համայնքների հետ՝ համատեղ որոշումներ կայացնել բազմաթիվ հարցերի շուրջ, որոնք ավանդաբար համարվել են «դպրոցի պարտականությունը»:
- Համայնքային խնդիրները հաճախ արտացոլվում են դպրոցի խնդիրների մեջ, և ներառման գործընթացը պահանջում է բազմակողմանի մոտեցում, որը կենտրոնացած է համայնքի վրա, ամրապնդում է փոխհարաբերությունները, կառուցում գործընկերային հարաբերություններ և օգտագործում համայնքների ազդեցությունը խնդիրները լուծելու համար:

# ՀԱՎԵԼՎԱԾ

**Ինքնանդրադարձ (ռեֆլեքսիա)**

## Ինքնավերլուծություն և ինքնանդրադարձ

Յուրաքանչյուր օրվա ավարտին
մասնակիցների կողմից իրականացվող
ինքնավերլուծության և ինքնանդրադարձի հնարներ

## 1. ՏԱՍԸ ՏԱՐԻ ԱՆՑ

Նշե՛ք երեք բան, որը կուզենայիք հիշել այս թեմայից տասը տարի հետո:

## 2. ՎԱՐԴ, ՓՈՒՇ, ԲՈՂԲՈՋ

**ՎԱՐԴ**

Նշեք մեկ բան,
որը լավ հասկացաք:

**ԲՈՂԲՈՋ**

Նշեք մեկ բան, որը
սովորելիս Ձեր գլխում
նոր միտք առաջացավ:

**ՓՈՒՇ**



Նշեք մեկ բան, որը
սովորելիս դժվարության
հանդիպեցիք:

## 3.ԵՌՕՐՅԱ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՐ

Կոորդինատային հարթության վրա տեղադրեք դասընթացի թեմաները՝ առաջնորդվելով տրված խորհրդանիշներով , որտեղ կանաչ սմայլիկը նշանակում է «լիարժեք հասկացել եմ», դեղինը՝ հասկացել եմ մասամբ», կարմիրը՝ «գրեթե չեմ հասկացել»:



Դասընթացի թեմաներն են.

**ԴԱՍ 1.** «Ինքնություն, տարբերություն և ներառականություն»

**ԴԱՍ 2.** «Ներառականության հիմնական հասկացությունները. Հավասարություն, արդարացիություն, արդարություն»

**ԴԱՍ 3.** «Շփումը այլոց հետ. միջանձնային հաղորդակցություն»

**ԴԱՍ 4.** «Դպրոցներ և ինստիտուցիոնալ իշխանություն»

**ԴԱՍ 5.** «Դպրոցի տնօրենի կերպարը»

**ԴԱՍ 6.** «Դասարանում բազմազան մշակույթ կրող անձանց հետ աշխատանքը»

**ԴԱՍ 7.** «Դեպի մշակութային առումով իրազեկ դպրոցներ և ներառական համայնքներ»

Նշումներ

Նշումներ

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրավոր թույլտվությունը:

© Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ

Facebook.com/UNICEFArmenia
Twitter.com/UNICEFArmenia
Instagram.com/UNICEF_Armenia
YouTube.com/UNICEFArmenia

yerevan@unicef.org
unicef.am

unicef

յուրաքանչյուր
երեխայի համար